

ՊՈԼՍԱՅԱՅ ԶԱՄԱՅՆՔԸ
ՆՈՐ ՄԱՐՏԱՅՐԱՎԵՐՆԵՐԻ ԱՌԱՋ
ՌՈՒՔԵՆ ՄԵԼՔՈՆՅԱՆ

Այսօր բազմաթիվ խնդիրների առջև կանգնած Ստամբուլի հայ համայնքը որոշակի դեր էլ տեղ ունի հայ-թուրքական հարաբերություններում: Բնական են համարվում համայնքի հետաքրքրվածությունը եւ շահագրգռվածությունը Հայաստան–Թուրքիա հարաբերությունների կարգավորմամբ, սակայն ակնհայտ է նաեւ, որ թուրքական իշխանությունները փորձում են Թուրքիայում բնակվող հայերին օգտագործել իրենց քաղաքական նպատակների համար եւ հատկապես այն ժամանակ, երբ հայ-թուրքական հարաբերություններում կամ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացում տեղի են ունենում թուրքական կողմին ոչ ձեռնտու իրադարձություններ:

Պոլսահայ համայնքի ներգրավումը հիշյալ խնդիրների մեջ ակնհայտ միտում է պարունակում, եւ կարելի է պնդել, որ այն թուրքական իշխանություններն իրենց զինանոցի մի տարր են համարում: Հիշենք, որ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման հարցի ակտիվացման տարբեր փուլերում հայտարարություններով են հանդես եկել ոչ միայն համայնքի աշխարհիկ շրջանակների ներկայացուցիչները, այլեւ բարձրաստիճան հոգեւորականները: Ավելորդ է հիշել Մեսրոպ Մութաֆյան պատրիարքի այցը ԱՄՆ, որի նպատակն էր կանխել Ցեղասպանության հարցի քննարկումը Կոնգրեսում: Հայ համայնքի ներկայացուցիչներին ստիպելով հայտարարություններ անել Ցեղասպանության միջազգային ճանաչման դեմ՝ թուրքական իշխանությունները մի անգամից երկու նպատակ են հետապնդում. նախ աշխարհին փորձում են ներկայացնել, թե հենց իրենք՝ Թուրքիայի հայերն են դեմ Ցեղասպանության հարցի բարձրացմանը, եւ երկրորդ՝ մեկ անգամ եւս սեպ են խրում Հայության տարբեր հատվածների մեջ:

Փաստենք, որ Թուրքիայի հայ համայնքը ղեկավար չունի, այդպիսի իրավական կարգավիճակ չկա, եւ աշխարհիկ ղեկավար կառույցի բացակայությունը դարձել է համայնքում տասնամյակներ տեւող տարածայնությունների, քննարկումների առիթ: Համայնքի փաստացի ղեկավար է ընդունվում պատրիարքը, սակայն այս հանգամանքն էլ հակասության

մեջ է թուրքիայում տարածված լաիցիզմի դրույթի հետ, համաձայն որի՝ հոգեւորականը չի կարող աշխարհիկ գործերով զբաղվել: Համայնքի մի մասը (որոնց մեջ էր նաեւ Հրանտ Դինքը) պահանջում է ստեղծել համայնքի կառավարման աշխարհիկ մարմին, որը հավանության չի արժանանում ո՛չ իշխանությունների եւ ո՛չ էլ համայնքի առավել պահպանողական հատվածի կողմից: Ավելորդ չէ հիշել, որ մինչեւ 1960թ. ռազմական հեղաշրջումը պոլսահայ համայնքում եղել է նաեւ աշխարհիկ բնույթ ունեցող կառավարման խորհուրդ, որն այդ ժամանակ վերացվել է:

Հայտնի է, որ ներկայիս պատրիարք Մեսրոպ Մութաֆյանն անբուժելի հիվանդ է, եւ հայ-թուրքական գործընթացների ներկա զարգացումների ժամանակ թուրքիայի իշխանությունները փաստորեն զրկվել են իրենց հին զինանոցի տարրերից մեկից: Որպես այլընտրանք ստեղծված իրավիճակին՝ թուրքական իշխանությունները փորձեցին իրենց անհրաժեշտ հայտարարությունները տարածել հայ համայնքի ներկայացուցիչներից Պետրոս Շիրինօղլուի միջոցով: Նշենք, որ Ստամբուլի հայ համայնքում կան տարատեսակ գույք տնօրինող հիմնադրամներ, որոնք ունեն հոգաբարձուների խորհուրդ եւ նախագահներ: Պետրոս Շիրինօղլուն ահա այդպիսի մի կառույցի՝ Սուրբ Փրկիչ հայկական հիվանդանոցի հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահն է եւ համարվում է համայնքի «օլիգարխիայի» կարեւոր անուններից մեկը: Թուրքական մամուլում պաշտոնական լրատվություն տարածվեց, որ հայ համայնքին վերաբերող որոշ հարցեր քննարկելու համար «*հայ համայնքի ղեկավար Պետրոս Շիրինօղլուին*» ընդունելու է վարչապետ Էրդողանը: Ի դեպ, հանդիպումը տեղի էր ունենում այն օրերին, երբ միջազգային մամուլում քննարկման առաջնային թեմաներից էին թուրքիայի վարչապետ Էրդողանի հայտարարությունները, որոնցում նա սպառնում էր երկրից վտարել այնտեղ գտնվող, իբրեւ թե, 100 հազար հայաստանցի հայերին:

Ինչպես եւ կանխատեսելի էր, վարչապետի հետ հանդիպումից հետո Շիրինօղլուն արեց մի քանի հայտարարություն, որոնք անմիջապես լայն տարածում գտան թուրքական ու միջազգային մամուլում: Նրա հայտարարությունները վերաբերում էին հայ-թուրքական հարաբերություններին, Ցեղասպանության միջազգային ճանաչմանը, պոլսահայ համայնքին. սրանով թուրքական իշխանությունները ցանկանում էին թուրքիայի հայերի շուրթերով ամբողջ աշխարհին «տեղեկացնել» պոլսահայերի «երջանիկ վիճակի» մասին: Սրանով թուրքական կողմը

ծագումն էր սրբագրել Էրդողանի անհավասարակշիռ հայտարարությունները, եւ այս հարցումն օգտագործեց պոլսահայ համայնքի ներկայացուցիչներին:

Շիրինօղլուի հայտարարություններից մամուլում տարածվեցին հատկապես հետեւյալները. *«Որպես համայնք՝ մենք լուրջ խնդիրներ չունենք: Հայերը թուրքիայում իրենց ապահով են զգում: Երբեւէ լսե՞լ եք հայերի հետ կապված մի բողոք: Թուրքիայում բնակվող մի հայից բողոք լսե՞լ եք, կա՞, ո՛չ, չկա: Թող սփյուռքահայերը գան թուրքիայի հայկական հիմնադրամները, գույքը, դպրոցները, հայ քաղաքացիների կյանքը տեսնեն եւ նոր միայն կարծիք կազմեն»:* Շիրինօղլուն ջանաց նաեւ իր վրա վերցնել թուրքիայում անօրինական բնակվող հայաստանցիների թվաքանակի շուրջ Էրդողանի ներկայացրած ակնհայտ սխալ տվյալը՝ 100 հազար, որը հերքեց անգամ նախագահ Աբդուլահ Գյուլը: Խոսելով այս մասին՝ Շիրինօղլուն նշեց. *«Թուրքիայում 100 հազար հայաստանցի չկա, այլ՝ 20 հազար: Հարգարժան վարչապետը, վստահելով եւ հավատալով մեր խոսքին, 100 հազար թիվն է կիրառել: Մենք ներողություն ենք խնդրում նրան սխալ տեղեկություն տալու համար»:* Այս բացատրությունը տրամաբանությունից հեռու է, քանզի դժվար է պատկերացնել, որ ավելի քան 70 միլիոն բնակչություն ունեցող երկրի վարչապետը պատասխանատու հայտարարություններ է անում՝ հենվելով անհատների ներկայացրած տվյալների վրա: Խոսելով Ցեղասպանության միջազգային ճանաչման մասին՝ Շիրինօղլուն եւս մեկ անգամ կրկնեց թուրքական պաշտոնական վարկածները. *«Հայաստանը մեր հարեւան երկիրն է, եւ քանի որ ծագումով հայ են, անպայման նրա հետ կապվածություն ունեն, սակայն ինձ համար առաջնային են թուրքիայի շահերը: Ինչպես ասում է վարչապետը, պատմությունը պետք է թողնել պատմաբաններին: Անպայման եւ՛ հայկական կողմից, եւ՛ թուրքական կողմից կորուստներ են եղել: Ես կարծում եմ, որ դա պետք չէ որակել ցեղասպանություն: Շատ անկեղծ երկու ընկերոջ միջեւ զժտություն է եղել: Ամբողջ աշխարհում մնան դեպքեր շատ են լինում»:*

Շիրինօղլուի հայտարարությունների առաջացրած ընդհանուր բացասական ֆոնին, սակայն, կա եւ դրականը. անմիջապես սկսվեց եւ արագ թափ առավ մի գործընթաց, որն արժանի է հատուկ ուշադրության: Թուրքական իշխանությունների կազմակերպած այդ ամբողջ գործընթացը պոլսահայ համայնքի որոշակի շրջանակներում բուռն հակազդեցություն առաջացրեց: Համայնքի մի խումբ անդամներ հանդես եկան հայտարարությամբ, որտեղ ասվում է. *«Սուտ է, որ հայերը թուրքիայում*

իրենց ապահով են զգում, հայերն այս երկրում ենթարկվում են խտրականության, ռասիստական վերաբերմունքի, միջազգային հարաբերություններում կիրառվում են որպես սակարկման առարկա, եւ հասարակության զգալի հատվածում ընդգծված հակահայկականությունը շարունակվում է»: Հայտարարության հեղինակները նշում են, որ իրենք չեն ապրում Շիրինօղլուի ներկայացրած իդեալական թուրքիայում եւ որպես բողոքի նշան հենց նույն օրը բացեցին խորհրդանշական անուն ունեցող «Մենք այլ թուրքիայում ենք ապրում» համացանցային էջը, որտեղ սկսվեց ստորագրահավաք ընդդեմ Շիրինօղլուի եւ նրա հայտարարությունների: Դեմ արտահայտվողները նաեւ հստակ նշում են, որ Շիրինօղլուն որեւէ իրավունք չունի համայնքի անունից հանդես գալու, քանի որ համայնքի ղեկավար չէ, եւ, բացի այդ, Ցեղասպանության հարցը հնարավոր չէ ներկայացնել որպես «երկու եղբոր գոտություն» ու այդպիսով մեղմացնել այն: Հատկապես ուշագրավ են հայ համայնքի անդամ Հովսեփ Թոքաթի մտքերը, որ թուրք ժողովրդին ներկայացնել փաստերը եւ համոզել նրան ընդունել դրանք, այլ ոչ թե ծածկել իրականությունը: Պոլսահայերի հայտարարությունների մեջ նկատելի են նաեւ միասնականության կոչեր՝ հատկապես Ցեղասպանության հարցում:

Անդրադառնալով Էրդողանի՝ Թուրքիայում անօրինական բնակվող հայաստանցիներին վտարելու սպառնալիքներին՝ պետք է նշել, որ սա եւս թուրքական զինանոցի նոր տարրերից չէ: Հիշենք, որ 90-ականների կեսերին նմանատիպ հայտարարություններ էր անում նաեւ այն ժամանակվա վարչապետ Թանու Չիլերը, հատկապես այն ժամանակ, երբ միջազգային ասպարեզում սրվում էր Ցեղասպանության ճանաչման հարցը:

Սակայն Էրդողանի սպառնալիքները չպետք է լիովին անտեսել, մանավանդ որ Թուրքիայի ոչ վաղ անցյալի պատմության մեջ նման նախադեպ արդեն կա: Այսպես, 1930թ. Թուրքիայի եւ Հունաստանի միջեւ կնքված պայմանագրով ճանաչվում էր երկու երկրների քաղաքացիների բնակության, առելտրով զբաղվելու, գույք ձեռք բերելու իրավունքը: Այդ ժամանակ Թուրքիայում կային Հունաստանի քաղաքացի հանդիսացող հազարավոր մարդիկ, որոնց մեծ մասը ծնվել, մեծացել էր Թուրքիայում: 1964թ., երբ սրվեցին թուրք-հունական հարաբերությունները՝ կապված Կիպրոսի խնդրի հետ, թուրքական կառավարությունը միակողմանի չեղյալ հայտարարեց 1930թ. պայմանագիրը եւ սկսեց արտաքսել Հունաստանի քաղաքացիներին, որոնք մեծ մասամբ ստամբուլաբնակ հույներ

էին: Այն ժամանակ եւս թուրքական իշխանություններն այս հանգամանքը փորձում էին օգտագործել որպես շանտաժի մեթոդ եւ հունական կողմից որոշակի գիշումներ կորզելու եղանակ: Հատկանշական է, որ այդ արտաքսումը տարածվեց ոչ միայն Հունաստանի քաղաքացի հույների, այլեւ թուրքահպատակ հույների վրա, քանի որ տասնամյակների ընթացքում ձեւավորվել էին ընտանիքներ, որտեղ, օրինակ՝ կինը Հունաստանի, իսկ ամուսինը՝ Թուրքիայի քաղաքացիներ էին: Եվ արտաքսված շուրջ 12 000 Հունաստանի քաղաքացի հույների հետ միասին ստիպված արտագաղթեցին նաեւ Թուրքիայի հազարավոր քաղաքացի հույներ (մասնագիտական գրականության մեջ այս հույներին անվանում են «Ստամբուլի վերջին արտոյալներ»):

ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՅ ԲՈՂՈՔԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԸ **Վահրամ Հովյան**

Թուրքիան հայ բողոքականության համար առանձնահատուկ է նրանով, որ բողոքականության ծագումը հայոց մեջ տեղի է ունեցել հենց այստեղ: 1846թ. Կ.Պոլսում ձեւավորվեց հայ բողոքականների առաջին համայնքը: Այստեղից բողոքականությունն աստիճանաբար տարածվեց դեպի Օսմանյան կայսրության մյուս հայաշատ շրջաններ, այդ թվում նաեւ՝ Արեւմտյան Հայաստան, հետագայում, Հայոց ցեղասպանության հետեւանքով, դեպի Սփյուռքի հայ համայնքներ:

Ներկայումս, չնայած առկա դժվարություններին եւ մարտահրավերներին, Թուրքիայի հայ բողոքականները որպէս էթնո-դավանաքային միավոր ցուցաբերում են բավարար կենսունակություն եւ ակտիվություն, ինչը թույլ է տալիս խոսելու Թուրքիայի հայ բողոքականների՝ որպէս առանձին համայնքի, մասին:

Ժամանակակից Թուրքիայի հայ բողոքական համայնքի դիտարկումները կենտրոնանում են հիմնականում հետեւյալ հիմնախնդիրների վրա.

- ❖ Հայ բողոքական համայնքի թվաքանակը եւ կազմակերպական կառույցները
- ❖ Հայ բողոքականությունը թուրքական միջավայրում
- ❖ Թուրքիայի հայ բողոքական համայնքի գործունեության ուղղությունները:

Հայ բողոքական համայնքի թվաքանակը եւ կազմակերպական կառույցները

Թուրքիայում հայ բողոքականների թվաքանակի մասին խոսելիս անհրաժեշտ է կանգ առնել այն պայմանավորող երկու գործոնների՝ ազգային եւ կրոնական փոքրամասնությունների նկատմամբ բռնաճնշումների ու հալածանքների եւ Թուրքիայում լայնորեն ծավալվող միսիոներական շարժման վրա:

1. *Ազգային եւ կրոնական փոքրամասնությունների նկատմամբ բռնաճնշումները:* Առաջին աշխարհամարտի ընթացքում իրագործված Հայոց ցեղասպանությունը, ինչպէս նաեւ դրան հաջորդած քրիստոնյաների շարունակական հալածանքները Թուրքիայում խիստ բացասական ազդեցություն ունեցան նաեւ հայ բողոքական համայնքի վրա՝ հանգեցնելով

վերջինիս թվաքանակի խիստ նվազմանը: Եթե մինչեւ Առաջին աշխարհամարտը բողոքական հայերի թիվը Թուրքիայում անցնում էր 60 հազարից, ապա Ցեղասպանությունից հետո նրանց թիվը կազմում էր 14 հազար: Հայ բողոքականների մի մասը գոհվեց Ցեղասպանության հետեւանքով, մի զգալի մասն էլ բովանդակ Հայության հետ միասին տարագրվեց: Ցեղասպանությունից հետո արդեն հանրապետական Թուրքիայում հայ բողոքական համայնքի թվաքանակը շարունակեց նվազել քրիստոնյաների նկատմամբ շարունակվող անհանդուրժողականության եւ հալածանքների հետեւանքով:

2. *Միսիոներական շարժումը:* Թուրքիայում իրականացվող ակտիվ միսիոներական գործունեության հետեւանքով նախկինում բռնի իսլամացված բազմաթիվ հայեր կրկին ընդունում են քրիստոնեություն (այդ թվում նաեւ՝ բողոքականություն), ինչը նշանավորվում է նաեւ դեպի ազգային արմատները վերադարձի միտումով: Սա նպաստում է հայ բողոքականների թվաքանակի ավելացմանը:

Այս երկու հակոտնյա գործոնների ազդեցությունը խիստ դժվարացնում է Թուրքիայի հայ բողոքականների ներկայիս թվաքանակը ստույգ որոշելու հարցը: Համաձայն որոշ տվյալների՝ Թուրքիայում հայ բողոքականների թվաքանակը ներկայումս կազմում է մոտ 500 մարդ: Սակայն այս տվյալները չեն ընդգրկում միսիոներական գործունեության արդյունքում կրկին քրիստոնեություն ընդունած իսլամացված հայերին: Իսկ վերջիններիս թվաքանակի մասին տվյալները բացակայում են: Հետեւաբար, Թուրքիայի հայ բողոքական համայնքի ճշգրիտ թվաքանակի որոշման հարցը դեռեւս մնում է առկախ:

Թուրքիայում փոքրամասնությունների նկատմամբ իրականացված հալածանքները հանգեցրին նաեւ հայ բողոքականների կազմակերպական կառույցների կրճատմանը: Ի տարբերություն այլ երկրների հայ բողոքական համայնքների, որոնց բնորոշ է տարատեսակ (հոգեւոր-եկեղեցական, կրթամշակութային, սոցիալական, տեղեկատվական) կառույցների առատությունը, Թուրքիայի հայ բողոքական համայնքի կազմակերպական կառույցները ներկայումս կազմում են խիստ սահմանափակ թվով եկեղեցական ու կրթական հաստատությունները: Երբեմնի բազմաթիվ ավետարանական եկեղեցիների փոխարեն, որոնք սփռված էին Թուրքիայի հայաշատ վայրերում, կա ընդամենը երկու Հայ Ավետարանական եկեղեցի՝ Կ.Պոլսի Գեղիքփաշա եւ Բեյոզլու թաղամասերի Հայ Ավետարանական եկեղեցիները: Եթե Առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին հայ բողոքական համայնքն Օսմանյան կայսրությունում ուներ

675 դպրոց, ապա այժմ կա միայն Կ.Պոլսի Գեղիքփաշա թաղամասի Հայ Ավետարանական եկեղեցուն կից դպրոցը: Այլ կարգի հաստատությունները՝ բարեգործական, տեղեկատվական եւ այլն, բացակայում են:

Նախկինում գործող Հայ Ավետարանական եկեղեցիներն ավերված ու լքված են: Թուրքական կառավարությունը թույլ չի տալիս վերանորոգել եւ վերագործարկել դրանք, իսկ իր կողմից վերանորոգվածները ծառայում են միայն որպես թանգարանային նմուշ՝ զբոսաշրջության զարգացման համար: Ինչ վերաբերում է Հայ Ավետարանական եկեղեցու երբեմնի հարուստ կալվածքներին (դպրոցներ, ճամբարներ, որբանոցներ եւ այլն), ապա դրանք բռնագրավված են պետության կողմից: Դրանք վերադարձնելու ջանքերն առայժմ արդյունք չեն տվել: Խնդիրն այն է, որ Թուրքիայում կրոնական համայնքներին արգելված է սեփականություն ունենալ: Բռնագրավված գույքի մի մասն էլ թուրքական կառավարությունը վաճառել է մասնավոր անձանց, ինչն ավելի է դժվարացնում դրանց վերադարձման գործը:

Ինչեւէ, այժմ գործող Ստամբուլի Հայ Ավետարանական եկեղեցիները մտնում են Մերձավոր Արեւելքի Հայ Ավետարանական եկեղեցիների միության մեջ (կենտրոնը՝ Բեյրութ): Գեղիքփաշա թաղամասի Հայ Ավետարանական եկեղեցուն պատարագները մատուցվում են չորս լեզվով՝ հայերեն, թուրքերեն, պարսկերեն եւ ռուսերեն, քանի որ այցելուների էթնիկ կազմը չի սահմանափակվում միայն հայերով:

Հայ բողոքական համայնքը թուրքական միջավայրում

Մի կողմից Թուրքիայի հայության, մյուս կողմից՝ բողոքականության մաս կազմելով՝ հայ բողոքականները Թուրքիայում փոքրամասնություն են երկակի՝ ազգային եւ կրոնական կտրվածքով: Երկակի կարգավիճակն ունի ինչպես բացասական, այնպես էլ դրական կողմեր:

Բացասական կողմն այն է, որ դա հանգեցնում է երկակի ճնշումների ու հալածանքների՝ կրոնական եւ ազգային հողի վրա:

1. Կրոնական ճնշումները: Հայ բողոքականները Թուրքիայում ենթարկվում են քրիստոնյաների նկատմամբ իրականացվող հալածանքներին եւ հետապնդումներին: Մասնավորապես, վերջին շրջանում միսիոներական շարժման հետեւանքով Թուրքիայում լայն թափ է առնում քրիստոնեացման գործընթացը, որի արդյունքում Թուրքիայի շատ քաղաքացիներ, այդ թվում նաեւ թուրքեր, ընդունում են քրիստոնեություն (ինչպես կաթոլիկություն, այնպես էլ բողոքականություն): Սա հարուցում է թուրքական իշխանությունների եւ ազգայնամոլ տարրերի անհանգստությունն

ու հակազդեցությունը, որը դրսեւորվում է հիմնականում քրիստոնյաների դեմ հարձակումների եւ սպանությունների ձեւով, ինչպես, օրինակ, 2007թ. ապրիլի 18-ին Մալաթիայի «Ձիրվե» հրատարակչատանը թուրք ազգայնամուլների կողմից երեք բողոքականների դաժան սպանությունն էր: Հակազդեցության թիրախ են դառնում նաեւ հայ բողոքականները:

2. *Ազգային ճնշումները:* Հայ բողոքականների դրությունն ավելի է ծանրացնում նրանց հայ լինելու հանգամանքը, քանի որ բողոքական հայերի նկատմամբ թուրքիայում իրականացվել եւ իրականացվում է ոչ միայն կրոնական, այլեւ ազգային հալածանքների քաղաքականություն: Դեռեւս կոտորածների ու Ցեղասպանության տարիներին թուրքերն ուշադրություն չէին դարձնում հայերի դավանանքային տարբերությունների վրա, հավասարապես կոտորում էին բոլորին:

Դրական կողմն այն է, որ, լինելով թուրքիայի բողոքականների մի շերտը, հայ բողոքականները որոշակիորեն վայելում են արտասահմանյան բողոքական կազմակերպությունների հովանավորությունը: Դեռեւս 19-րդ դարում հայերի՝ բողոքականություն ընդունելու դրդապատճառ էր եվրոպացիների կողմից մուսուլմանների հալածանքներից պաշտպանված լինելու ցանկությունը: Կոտորածների ժամանակ հայ բողոքականներին որոշակի օգնություն էին ցույց տալիս գերմանական, սկանդինավյան եւ անգլիական կառույցները: Ներկայումս էլ հայ բողոքականների գործունեությունը թուրքիայում տեղավորվում է այդ երկրի բողոքականության գործունեության շրջանակներում, որոնք վայելում են արտասահմանյան բողոքական կազմակերպությունների հովանավորությունը: Դա թույլ է տալիս հայ բողոքականներին ավելի ակտիվ գործունեություն ծավալել ինչպես հոգեւոր, այնպես էլ ազգային հիմնախնդիրների ոլորտներում: Հոգեւոր գործունեության ասպարեզում հայ բողոքական կրոնավորները, մասնավորապես, ավելի հաճախ են լինում Արեւմտյան Հայաստանի բնակավայրերում՝ այնտեղ իրականացնելով հոգեւոր-քարոզչական աշխատանք: Ինչ վերաբերում է ազգային խնդիրներին, ապա բողոքական հայերը, ի տարբերություն առաքելականների, որոնք հիմնականում լոյալ վերաբերմունք են դրսեւորում պետության նկատմամբ, ավելի նախանձախնդիր եւ հետեւողական են թուրքիայում Հայոց ցեղասպանության, փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության եւ այլ հիմնախնդիրների բարձրացման հարցերում: Այս ամենի հիմքում, ամենայն հավանականությամբ, ընկած է արտասահմանյան բողոքական կառույցների կողմից որոշակի պաշտպանվածության զգացումը, ինչը բացակայում է, օրինակ, առաքելական հայերի պարագայում:

Հայ բողոքական համայնքի գործունեության ուղղությունները

Չնայած հայ բողոքականները կրոնական առումով Թուրքիայի բողոքականության մի մասն են, նրանց գործունեությունը հիմնականում ուղղված է ազգային հիմնախնդիրների լուծմանը: Այս ասպարեզում կա գործունեության երկու հիմնական ուղղություն:

❖ *Հայոց ցեղասպանության եւ Հայ դատի հիմնախնդիրների արձարծում:* Բողոքական հայերը Թուրքիայի հայության այն շերտն են, որոնք աչքի են ընկնում առավել նախանձախնդրությամբ ազգային հիմնախնդիրների հարցում: Մասնավորապես, Հայոց ցեղասպանության, Հայ դատի հիմնախնդիրների հանդուգն եւ ջերմ պաշտպանների համբավ ունի վերապատվելի Գրիգոր Աղաբալօղլուն:

❖ *Հայապահպանություն եւ հայադարձություն:* Հայ բողոքականների հոգեւոր-եկեղեցական գործունեությունն իմաստավորվում է ազգային-քաղաքակրթական տեսանկյունից: Այն հետապնդում է մի կողմից՝ Թուրքիայի հայության ուժացման կանխման՝ հայապահպանության, մյուս կողմից՝ ուժացած (բռնի իսլամացված) հայության ազգային արմատներին վերադարձի՝ հայադարձության նպատակ: Այս առումով հատկանշական է Կ.Պոլսի Գեդիքփաշա թաղամասի Հայ Ավետարանական եկեղեցու հոգեւոր հովիվ, վերապատվելի Գրիգոր Աղաբալօղլուի դիտարկումը. «...հայութեան այդ հսկայ զանգուածը, որ այսօր իսլամացած է եւ որպէս հետեւանք՝ թրքացած, միայն հաւատքի զօրութեամբ կարելի է վերադարձնել իր արմատներուն, իր ազգութեան: Միայն քրիստոնէական հաւատքն է, որ կրնայ զանոնք փրկել եւ անոնց մէջ արթնցնել ազգային պատկանելիութեան գիտակցութիւնը»: Պատահական չէ, որ հայ բողոքականներն իրենց գործունեությունը Թուրքիայում ծավալում են ուժացման տարբեր մակարդակներում գտնվող հայության շրջանում՝ նախկինում հայկական, ներկայումս թրքախոս, քրդախոս, արաբախոս բնակավայրերում: Այս առնչությամբ վերապատվելի Աղաբալօղլուն վկայում է. «... մենք գաւառներուն մէջ աշխատանք կը տանինք, հաւատքի եւ կրօնին զօրութեամբ մեր արմատներուն, մեր պատմութեան հետ առնչակից դարձնել բոլոր այն հայերը, որոնք այսօր, կամքէ անկախ պատճառներով, հեռացած են մեզմէ»:

Այսպիսով, կարելի է անգամ ասել, որ հոգեւոր-եկեղեցական գործունեությունը Թուրքիայի հայ բողոքականության համար միջոց է ազգային-քաղաքակրթական, այն է՝ Թուրքիայում հայկական քաղաքակրթության պահպանման եւ վերականգնման խնդրի լուծման համատեքստում:

**ՆԵՌՕՍՄԱՆԻՉՍԸ ԹՈՒՐՔԻԱՅԻ
ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ**
Արեստակես Սիմավորյան

2002թ. Թուրքիայում գալով իշխանության՝ Արդարություն եւ զարգացում կուսակցությունը (ԱԶԿ) սկսեց վերանայել քեմալականության սկզբունքների վրա հիմնված երկրի արտաքին քաղաքականության հայեցակարգը, քանզի, ըստ ԱԶԿ ղեկավարների, այն այլեւս չի բավարարում Թուրքիայի աշխարհաքաղաքական պահանջներին: Հիշեցնենք, որ Աթաթուրքը հարկ էր համարում վերջ դնել օսմանյան անցյալին եւ Թուրքիան հնարավորինս հեռու պահել տարածաշրջանային խոշոր նախագծերից:

Ակնհայտ է, որ այսօր թուրքական վերնախավում տարբեր տեսլականներ կան Թուրքիայի ապագայի վերաբերյալ, ինչի արդյունքում մի շարք գաղափարախոսությունների շուրջ (նեոօսմանիզմ, նեոպանթուրքիզմ, թուրքական եվրասիականություն եւ այլն) քննարկումները լայն արձագանք են գտնում Թուրքիայի հասարակական կյանքում:

Այդօրինակ գաղափարախոսությունների շարքում՝ թուրքական եւ արեւմտյան փորձագիտական հանրություն այսօր առավել ակտուալ քննարկման թեմա է դարձել նեոօսմանիզմը:

* * *

Նեոօսմանիզմի տարրերի մասին, թերեւս, առաջին անգամ բարձրաձայնեց Թուրքիայի նախկին նախագահ Թուրղութ Օզալը, որի կարծիքով՝ երկրի բնակիչներին եւ բալկանյան մուսուլմաններին համախմբողը իսլամն է, որոնց մեկ ընդհանուր պետության գաղափարի շրջանակում կարող է միավորել միայն նորովի մշակված գաղափարախոսությունը: Թեեւ Օզալը բացահայտորեն չասաց, թե որ գաղափարախոսությունն է ի վիճակի լուծել նման խնդիրները, սակայն ըստ թուրք վերլուծաբանների՝ նրա խոսքում ակնարկվում էր օսմանականության գիրկը վերադառնալու Թուրքիայի ձգտումը:

Մեր օրերում նեոօսմանականության աշխարհաքաղաքական հայեցակարգի մշակման գլխավոր ճարտարապետն է համարվում Թուրքիայի արտգործնախարար Ահմեդ Դավութօղլուն: Այս գաղափարախոսության

գլխավոր նպատակներն արտացոլված են նրա «խորքային ռազմավարություն» աշխատությունում:

Դավութբոլուն կարծում է, որ ԱՄՆ-ից ու Եվրոպայից կախվածությունը Թուրքիայի արտաքին քաղաքականությունն անհավասարակշիռ է դարձրել, վնասել Թուրքիայի ազգային եւ տարածաշրջանային շահերին: 2009թ. նոյեմբերի վերջին ելույթ ունենալով ԱԶԿ անդամների առջեւ՝ Թուրքիայի արտաքին քաղաքական գերատեսչության ղեկավարը հայտարարեց, որ իր երկիրն իրականացնում է նեոսոմանիզմի քաղաքականությունը: *«Կա ժառանգություն, որը թողել է Օսմանյան կայսրությունը: Մեզ անվանում են «նեոսոմաններ»:* Այո, մենք «նեոսոմաններ» ենք: *Չարկադրված ենք զբաղվել հարեւան երկրներով եւ գնում ենք նույնիսկ Աֆրիկա: Մեծ տերությունները շփոթված հետեւում են դրան»*, – ասել է նա:

Միաժամանակ, ըստ Դավութբոլունի, Թուրքիան չպետք է սահմանափակվի մեկ գաղափարի իրականացմամբ, եւ մեկմեկու պետք է հաջորդեն մյուս գաղափարախոսությունները. *«Օսմանյան կայսրությունը մեր պատմության մի մասն է, իսլամը՝ մեր մշակույթի տարրերից մեկը: Արեւմտաեվրոպական ուղղվածությունը մեր պատմական փորձն է, Թյուրքիզմը՝ գլխավոր շարժումը»*, – նշել է նա:

Այսպիսին են Դավութբոլունի մոտեցումները, որոնցում հստակ երեւում է, որ Թուրքիան իր աշխարհաքաղաքական նպատակներին է ծառայեցնելու բոլոր հնարավոր կենսունակ հայեցակարգերը:

Նեոսոմանիզմի վերաբերյալ կան տարբեր կարծիքներ: Ըստ որոշ գնահատականների՝ Թուրքիայի արտաքին քաղաքականությունում նեոսոմանիզմը հիմնվում է հետեւյալ դրույթների վրա.

1. Թուրքիան այլեւս հանդես չի գալիս ԱՄՆ եւ ՆԱՏՕ «կրտսեր գործընկերոջ» դերում, քանի որ այս երկիրը համարվում է Կենտրոնական Եվրասիայի եւ տարածաշրջանի անվտանգության գլխավոր բաղադրիչներից մեկը: Այստեղից էլ բխում են «կովկասյան ԵԱԶԿ» ստեղծելու եւ Մերձավոր Արեւելքում միջնորդական նախաձեռնություններ ցուցաբերելու թուրքական գաղափարները:

2. «Նեոսոմանիզմը» սպառնալիք չէ Արեւմուտքին եւ Ռուսաստանին:

3. «Նեոսոմանիզմն» ագրեսիվ կողմեր չունի:

Այլ տեսակետի համաձայն՝ նեոսոմանիզմն ունի երեք ընդգծված սկզբունք.

1. Երկրի ներսում եւ մուսուլմանական աշխարհի հետ (Մերձավոր Արեւելք, Բալկաններ, Չյուսիսային Աֆրիկա) գալ ընդհանուր համաձայնության: Օսմանյան կայսրության մաս կազմող նախկին երկրներին

օսմանիզմի դաշտ բերել «փափուկ» եւ հավասարակշիռ քաղաքականությանը: Այս առումով նեոսոսմանիզմն ունի երկու հեռանայուն՝ կայսերական եւ իսլամական:

2. Թուրքիան պետք է վարի դիվանագիտական եւ տնտեսական առավել ակտիվ քաղաքականություն՝ դառնալու համար տարածաշրջանի առանցքային երկիր:

3. Նեոսոսմանիզմի քաղաքականությունը Թուրքիային հնարավորություն է տալու Արեւմուտքից «պոկել» այն, ինչը մուսուլմանական է՝ Բոսնիա, Ալբանիա, Կոսովո, անգամ հիմնականում քրիստոնյա Մակեդոնիա եւ Բուլղարիա (հաշվի առնելով այս երկրներում մուսուլման բնակչության առկայությունը):

Մի շարք վերլուծությունների համաձայն՝ Անկարայի ղեկավարությունը նեոսոսմանիզմի քաղաքականության իրականացման համար որպես միջոց օգտագործելու է, այսպես կոչված, ինտեգրացիոն միջանցքները, ինչը սկիզբ է առնելու Թուրքիայից: Այն հիմնված պետք է լինի թուրքական «soft power»-ի վրա, որն ունի երկու հիմնական տարր՝ տնտեսական հզորություն եւ դեմոկրատիայի փորձ: Նման միջանցքները երեքն են.

1. Առաջին միջանցքը պետք է անցնի Թուրքիա-Սիրիա-Լիբանան-Հորդանան-Եգիպտոս մայրուղով՝ հետագայում ներառելով Իսրայելն ու պաղեստինյան հողերը:

2. Երկրորդ միջանցքի նպատակն է միավորել Թուրքիան, Իրաքը եւ Պարսից ծոցը:

3. Երրորդի դեպքում պետք է միավորվեն Թուրքիան, Իրանը եւ Պակիստանը:

Պետք է ասել, որ Թուրքիայի արտաքին քաղաքականության սույն մոդելը դեռ գործողության մեջ չի դրվել, հետեւաբար անկանխատեսելի է նաեւ բուն գործընթացը, հատկապես, որ նեոսոսմանիզմի մեկնաբանություններում կան հակասական դրույթներ:

Մյուս կողմից՝ նեոսոսմանիզմի գաղափարախոսությամբ լրջորեն հետաքրքրված են ամերիկյան քաղաքական որոշ շրջանակներ, հատկապես նեոպահպանողականները:

Թուրքական առաջատար վերլուծական կենտրոնների փորձագետների գնահատականներով՝ այս գաղափարախոսությունն ԱՄՆ-ի կողմից թուրքական վերնախավին պարտադրված քաղաքականություն է: Համարվում է, որ այն ԱՄՆ «ուղեղային կենտրոնների» մշակած, ռազմավարական հեռահար նպատակներ հետապնդող ծրագիր է. միջնորդ պետության, այս

պարագայում՝ Թուրքիայի միջոցով տարածաշրջանում, մասնավորապես՝ արաբական աշխարհի վրա իշխելու քաղաքականություն: Այս առումով նեոսամանիզմն ընդհանուր աղերսներ ունի ամերիկյան հայտնի «Մեծ Մերձավոր Արեւելք» նախագծի հետ:

Ի դեպ, Դավութօղլուն չի թաքցնում, որ սույն գաղափարախոսության ակունքները գալիս են ԱՄՆ-ից, եւ որ Թուրքիայի ապագայի մասին իր տեսլականի հիմքում մասամբ ընկած են Ջորջ Ֆրիդմանի աշխատության որոշ դրույթներ:

Գաղափարախոսության խրախուսումն ԱՄՆ-ի կողմից հետապնդում է մեկ այլ նպատակ՝ չեզոքացնել Թուրքիայի ազգայնական ուժերի պանթուրքիստական նկրտումները, քանի որ ԱՄՆ-ը չի ցանկանում Թուրքիան ազգային ուժեղ պետություն տեսնել:

Նեոսամանիզմի գաղափարախոսությունից անբաժան է իսլամը: Իսլամական գործոնը հանդես է գալու որպես համախմբող ուժ, քանի որ գաղափարախոսության հիմնական թիրախ դիտվում է իսլամական աշխարհը, առաջին հերթին՝ Մերձավոր Արեւելքի ու Յուսիսային Աֆրիկայի իսլամական երկրները: Այս ամենն ուղղված է նաեւ Իսրայելի քաղաքականության դեմ. ինչպես ցույց են տալիս այդ երկրի եւ Թուրքիայի հարաբերությունների վերջին զարգացումները, արվում են գաղափարախոսության իրականացման առաջին քայլերը՝ արաբական աշխարհին սիրաշահելու համար:

Մյուս ուղղությունը սելեռված է բալկանյան երկրների, մասնավորապես՝ Ալբանիայի, Կոսովոյի, Բոսնիայի, Մակեդոնիայի, Բուլղարիայի մուսուլմաններին մեկ ընդհանուր պետության մեջ միավորելու վրա:

Այս ամենն իրականացնելուց հետո, ըստ նեոսամանականների, Ստամբուլը ողջ իսլամական աշխարհի համար պետք է դառնա նեոխալիֆայության կենտրոն:

Ակնհայտ է, որ Թուրքիան նպատակ ունի ոչ միայն վերականգնել Օսմանյան կայսրության կարգավիճակը, այլեւ ձեռք բերելով տարածաշրջանի էներգետիկ պաշարներն ու ենթակառուցվածքները՝ վերածվել աշխարհաքաղաքական գերտերության:

Աշխարհաքաղաքական գերտերություն դառնալու նկրտումներն ակնհայտորեն երեւում են Ա.Դավութօղլուի 2010թ. հունվարի 8-ի ելույթում՝ Թուրքիայի դիվանագիտական կորպուսի հետ հանդիպման ժամանակ: Դավութօղլուն, մասնավորապես, ասել է, որ Թուրքիայի գերխնդիրը ոչ թե տարածաշրջանային, այլ համաաշխարհային տերության դերակատարումն ունենալն է, ինչը թույլ են տալիս նրա ուրույն աշխարհագրական դիրքը, պատմությունն ու դիվանագիտական փորձը:

Նեոսմանիզմի գաղափարախոսությունն ընդունելի է հիմնականում իշխող Արդարություն եւ զարգացում կուսակցության, իսլամական կողմնորոշում ունեցող Ալլահի բանակ, Ալլահի զինվորներ, Իսլամական հեղափոխության մարտիկներ թուրքական խմբավորումների համար:

Այս ամենին հակադրում է քեմալական կողմնորոշում ունեցող զինվորականությունը, ինչպես նաեւ ընդդիմադիր Ժողովրդա-հանրապետական կուսակցությունը:

Քեմալականների կարծիքով՝ ներկայիս վարչակազմը որդեգրել է հավակնոտ, անիրատեսական նախագիծ: Այն հեռացնելու է Թուրքիային Աթաթուրքի հանրապետական սկզբունքներից: Միեւնույն ժամանակ, քեմալականներին մտահոգող եւս մեկ գործոն է «քրդական հարցը», քանի որ նեոսմանիզմի կիրառման դեպքում քրդերը, բոլոր մուսուլմանների նման, կունենան մեծ ինքնուրույնություն:

Այս առումով, նեոսմանիզմը նաեւ բազմաձևակութային հանրության գաղափարական հիմնավորում է: Դրանով այն հակադրվում է քեմալականությանը, որը ձգտում է թուրքական պետության միատարրության:

**ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐ
ԵՎ ՀՆԱՐԱՎՈՐ ՍՑԵՆԱՐՆԵՐ
Փագիկ Տեր-Հարությունյան**

Հայ-թուրքական հարաբերությունների շուրջ ընթացող զարգացումները դուրս են եկել տարածաշրջանային ձեւաչափից եւ տեղափոխվել գլոբալ քաղաքականություն: Կան բոլոր հիմքերը ենթադրելու, որ, անկախ դիվանագիտական գործընթացների ներկա փուլի արդյունքներից, Երեւան–Անկարա հարաբերությունների հարցը երկար է մնալու մեր արտաքին քաղաքականության օրակարգում, քանի որ այն ռազմավարական բնույթ է կրում եւ կարեւորությամբ չի զիջում ԼՂՀ-ի շուրջ Ադրբեյջանի հետ ունեցած խնդրին: Պետք է նաեւ ամրագրել, որ Թուրքիայի հետ կապված զարգացումների արդյունքում Հայաստանի շուրջ ձեւավորեց բարենպաստ քաղաքական մթնոլորտ եւ, ի լրումն, հերթական անգամ արդիականացվեց «Հայկական հարցը». այն վերստին դարձավ տարբեր երկրների կառավարությունների ու պառլամենտների քննարկման առարկա:

Պակաս կարեւոր չէ նաեւ այն հանգամանքը, որ հայ-թուրքական գործընթացները հարստացրին հայ քաղաքական միտքը եւ լրացուցիչ առիթ հանդիսացան ակտիվացնելու ՀՀ արտաքին քաղաքականության ոլորտում նոր ռեսուրսների եւ հնարավորությունների փնտրտուքը: Այդ տեսանկյունից ուշադրության արժանի են բազմաբեւեռ համակարգի ձեւավորման հետեւանքով ընթացող գլոբալ եւ տարածաշրջանային փոփոխությունները: Մասնավորապէս, այդ նույն տրամաբանությանն են ենթարկվում նաեւ Եվրամիության շրջանակներում տեղի ունեցող զարգացումները, որոնք, ըստ մեզ, նոր հնարավորություններ են պարունակում ՀՀ արտաքին քաղաքականության համար:

« Հետամերիկյան » տարածաշրջան

Անշուշտ, դժվար է ներկայացնել գլոբալ հարթությունում ընթացող ռազմաքաղաքական գործընթացների համալիրը, քանի որ դրանք պարունակում են բազմաթիվ նրբերանգներ, քաղաքակրթական, տնտեսական եւ այլ բնույթի բաղադրիչներ: Միեւնույն ժամանակ, փորձենք դիտարկել այն հիմնական միտումները, որոնք հետեւանք են բազմաբեւեռ

աշխարհակարգի բավական հիվանդագին ձեւավորման: Փոփոխություններն ընթանում են աստիճանաբար եւ այդ պատճառով՝ կարճատեւ ժամանակային հատվածներում միշտ չէ, որ տեսանելի են: Միեւնույն ժամանակ, համակարգային փոփոխությունները, ինչպիսի ինտենսիվությամբ էլ որ տեղի ունենան, մշտապես հղի են անկանխատեսելի հետեւանքներով. պատահական չէ, որ որոշ քաղաքագետներ ներկա իրողությունները համեմատում են մինչեւ Երկրորդ աշխարհամարտը տիրող իրավիճակի հետ:

Այդ պայմաններում, շրջանցելով Չինաստանի գերիզորացման խնդիրը եւ դրա հետ կապված հնարավոր սցենարները (դրանք առանձին դիտարկման կարիք ունեն), Հայաստանի համար հեռանկարային քաղաքականության մշակման տեսանկյունից ամենահրատապը տարածաշրջանում Միացյալ Նահանգների ազդեցության հարաբերական նվազումն է: Դրա արտահայտություններից են, մասնավորապես, Թուրքիայի հետ կապված այն դժվարությունները, որոնք ունեցավ այդ տերությունը հայթուրքական զարգացումներում միջնորդական առաքելություն կատարելիս: Հատկանշական է, որ ինչպես նախորդ դարի սկզբին, այսօր էլ ԱՄՆ ընտրանու ներկայացուցիչները սկսել են ավելի հաճախ անդրադառնալ ԱՄՆ-ի կողմից «մեկուսացման» քաղաքականություն վարելու անհրաժեշտությամբ: Մասնավորապես, ԱՄՆ Հանրապետական կուսակցությունում ներկայումս առաջատար դիրք գրավող եւ 2012թ. նախագահական ընտրությունների հնարավոր թեկնածու, կոնգրեսական Ռոն Փոլը վերջերս հանդես եկավ ոչ միայն Իրաքից ամերիկյան զինուժն ամբողջովին դուրս բերելու օգտին, այլեւ կոչ արեց դուրս գալ ՄԱԿ-ից եւ ՆԱՏՕ-ից, լուծարել Դաշնային պահուստային համակարգը եւ սահմանափակել ԱՄՆ միջամտությունն այլ երկրների գործերին:

Մինչդեռ ամերիկյան նահանջը, համաձայն մի շարք վերլուծաբանական զեկույցների, կարող է հանգեցնել Մերձավոր եւ Միջին Արեւելքի, Հարավային Ասիայի (այսպես կոչված՝ Եվրասիական Բալկանների) տարածքում պայթյունավտանգ իրավիճակի ձեւավորմանը: Նկատենք, որ այդ տարածաշրջանն այժմ նույնպես, հատկապես Իրաքում եւ Աֆղանստանում ընթացող գործընթացների շնորհիվ, գտնվում է բավական անկայուն վիճակում, ինչը հիմնականում հարուցվել է նույն ամերիկացիների կողմից: Սակայն ամերիկյան ներկայությունը, որքան էլ տարօրինակ է հնչում, ապահովում է այդ «անկայունության կայունությունը»: Այսինքն՝ ստեղծված քաոսն այս կամ այն չափով կառավարելի է, ինչը դժվար թե պահպանվի ամերիկացիների հեռանալուց հետո (ընդունված է համարել,

որ անգլոսաքսերի նահանջն ավելի վտանգավոր է, քան նրանց հարձակումը):

Ակնհայտ է, որ նման անկառավարելի տարածաշրջանի ստեղծումը, որի երկրները կամ ունեն, կամ էլ ձգտում են ունենալ միջուկային զենք (դրանց թվում՝ Թուրքիան), Հայաստանի համար նոր մարտահրավեր է, որին համարժեք դիմակայելու համար անհրաժեշտ են նոր ռեսուրսներ եւ քաղաքական գործընկերներ: Այդ առումով որոշակի հնարավորություններ են պարունակում Եվրոպայում ընթացող զարգացումները:

«Գերմանական» Եվրոպայի ձեւավորումը

Հայտնի է, որ «Միացյալ Եվրոպա» ստեղծելու նախագծերը բավական հարուստ պատմություն ունեն, իսկ ներկայիս ԵՄ-ի վերաբերյալ հայեցակարգային մոտեցումները մշակվել են դեռեւս Երկրորդ աշխարհամարտը չավարտված, գլխավորապես անգլո-ամերիկյան քաղաքական ղեկավարության ջանքերով (այդ գործում հատկապես մեծ ավանդ ունեցավ Մեծ Բրիտանիայի վարչապետ Ուինսթոն Չերչիլը): Հետո արդեն այդ ուղղությամբ կատարվեցին առաջին գործնական քայլերն՝ ի դեմս Ֆրանսիայի, Գերմանիայի, Իտալիայի, Նիդեռլանդների, Բելգիայի եւ Լյուքսեմբուրգի կողմից 1951թ. Մասսօրիիստում կնքված պայմանագրի:

ԵՄ-ը ստեղծվել էր որպես մի կառույց, որի հենքում դրված է փոխկապվածությունը, ինչը եւ պետք է խոչընդոտեր առանձին երկրների եւ առաջին հերթին՝ Գերմանիայի ինքնուրույն գործելու եւ որպես հզոր տերություն վերականգնվելու հնարավորությանը: Այդ մեխանիզմը բավական արդյունավետ էր գործում երկբեւեռ եւ միաբեւեռ համակարգերում: Սակայն բազմաբեւեռ աշխարհակարգի եւ ֆինանսական ճգնաժամի պայմաններում, երբ սկսեցին առավել կարեւորվել սեփական ազգային շահերը, մեկնարկեցին տարանջատման գործընթացները: Դա արտահայտվում է ե՛ւ ԱՄՆ – Եվրոպա կապերի թուլացումով ու նրանց միջեւ մրցակցության մեծացումով, ե՛ւ ԵՄ երկրների տնտեսական եւ այլ ոլորտների զարգացման մակարդակների տարբերության խորացմամբ:

Ստեղծված նոր իրավիճակին առավել պատրաստ գտնվեց Գերմանիան: Բավական է նշել, որ վերջին 10 տարում գերմանական ապրանքների եւ ծառայությունների մրցունակությունը՝ ԵՄ այլ երկրների համեմատ, աճել է 25%-ով: Արդյունքում՝ Գերմանիան այսօր տնտեսական առումով ոչ միայն ԵՄ ամենահզոր տերությունն է, այլեւ այն երկիրը, որը

թելադրում է (արդեն ավելի քիչ հենվելով հարեւան Ֆրանսիայի վրա) ԵՄ գործունեության կանոնները: Բնորոշ է, որ կանցլեր Անգելա Մերկելին համաշխարհային ԶԼՄ-ում հաճախ անվանում են «Ֆրաու Եվրոպա»:

Աճել են նաեւ այդ երկրի ռազմաքաղաքական հավակնությունները. ներկայումս գերմանական ընտրանու ներկայացուցիչները հնչեցնում են ՆԱՏՕ բարեփոխման (նկատի ունենալով բուն եվրոպական դերակատարման մեծացումը), միջուկային զենքին տիրապետելու, ամերիկյան հենակայանները երկրից դուրս բերելու եւ նման այլ գաղափարներ: Դա վկայում է այն մասին, որ ոչ հեռու ապագայում «գերմանականացված» ԵՄ-ը կամ, որոշ սցենարներում՝ ԵՄ ձեւաչափից դուրս իր դաշնակիցների հետ գործող Գերմանիան, ձգտելու է իրեն վայել տեղ զբաղեցնել գլոբալ աշխարհաքաղաքական հարթությունում:

Ռուսաստան – Գերմանիա եւ «Մեծ Եվրոպա»

Վերոնշյալ միտումների տեսանկյունից հատկապես ուշագրավ է գերմանական զինվորական շրջանակների առաջարկած «արեւելյան սպառնալիքներին հակադրելու» նպատակով «Մեծ Եվրոպա» ձեւավորելու նորովի խմբագրված նախագիծը, համաձայն որի՝ ենթադրվում է Ռուսաստանի ներգրավումը ՆԱՏՕ կառույցին եւ այսպիսով, փաստորեն, այդ կառույցի «եվրասիականացումը»: Այդպիսի սցենարը կարող է հատկապես ակտուալանալ, եթե Միացյալ Նահանգներում նկատվող ինքնամեկուսացման ձգտումը (հիշենք կոնգրեսական Ռոն Փոլի հայտարարությունը ԱՄՆ-ը ՆԱՏՕ-ից դուրս բերելու մասին) տեսական դատողությունների ոլորտից տեղափոխվի գործնական հարթություն: Ակնհայտ է, որ նման զարգացումն առաջին հերթին ենթադրում է Ռուսաստանի պատրաստակամությունը՝ հաշվի առնելով վերջինիս բարդությոը ՆԱՏՕ-ի եւ նրա «ընդարձակման» հանդեպ: Սակայն այսօր ռուսական քաղաքականությունում նկատվում են միտումներ, որոնք կարող են իրատեսություն հաղորդել «Մեծ Եվրոպա» նախագծին, եւ դա պայմանավորված չէ միայն Մոսկվա–Բեռլին աշխարհաքաղաքական առանցքի վերաբերյալ ավանդական պատկերացումներով:

Ներկայումս Գերմանիան ՌԴ հիմնական տնտեսական գործընկերն է, նրանք իրագործում են խոշոր, աշխարհատնտեսական էներգետիկ ծրագրեր: Քաղաքական ոլորտում նույնպես առկա են որոշակի համաձայնություններ (մասնավորապես, Վրաստանի՝ ՆԱՏՕ-ին անդամագրվելու խնդրում): Կարելի է նաեւ այն, որ վերջին տարիներին Ռուսաստան

տանը սկսել է նախապատվությունը տալ նաեւ անուղղակի գործողություններին, այսինքն՝ վարում է ավելի նուրբ ռազմավարություն: Օրինակ, Ուկրաինայի նախագահական ընտրություններում «պաշտոնապես» ռուսամետ Յանուկովիչի նրցակից Տիմոշենկոն հակառուսական ուղղվածություն չուներ. այսինքն՝ ի տարբերություն նախորդ ընտրության, բարենպաստ քաղաքական դաշտը ձեւավորվել էր նախապես: Բարյացական էին նաեւ Եվրոպացիների՝ ընտրություններին տված գնահատականները. նրանք, ԱՄՆ ազդեցության թուլացման պայմաններում, ավելի ադեկվատ են ընկալում ռուսական ազդեցության վերականգնումն իր «օրինական» տարածքներում եւ ձգտում են արդեն ոչ թե «պոկել» Ուկրաինան, այլ վերածել այն ԵՄ-ՌԴ համագործակցության հարթակի: Այս բնույթի օրինակները բազմաթիվ են, եւ կարելի է փաստել, որ «Մեծ Եվրոպա» ձեւավորելու գաղափարը կարծես թե ընդունելի է դառնում կողմերի համար: Ստեղծված պայմաններում ԱՄՆ-ը եւ Մեծ Բրիտանիան նույնպես պետք է որ սկզբունքորեն դեն չլինեն «Մեծ Եվրոպա» նախագծին, քանի որ դա բնական պատմեչ կհանդիսանա հնարավոր արեւելյան-չինական էքսպանսիայի պարագայում:

Նախագծի հնարավոր ազդեցությունները տարածաշրջանում

Տեղակայված լինելով «Եվրասիական Բալկանների» հարեւանությանը, որտեղ առկա են կառավարելիության եւ վերահսկման նվազման միտումներ, Հայաստանի ռազմական անվտանգության գլխավոր երաշխիքներից է շարունակում մնալ ՌԴ-ի հետ ռազմավարական համագործակցությունը եւ վերջինիս ռազմական հենակայանը: Այդ տեսանկյունից՝ ՌԴ հնարավոր մասնակցությունը գերմանական շեշտադրումներով «Մեծ Եվրոպա» նախագծին, անշուշտ, կմեծացնի մեր դաշնակցի հնարավորությունները և, միաժամանակ, նոր հնարավորություններ կընձեռի գերմանացիներին, ինչը կարող է օգտակար դերակատարում ունենալ մեզ համար:

Գերմանիան, որոշակի ազդեցություն ձեռք բերելով Եվրասիական ռազմաքաղաքական դաշտում, կարող է մեր տարածաշրջանը որպես հարթակ դիտարկել իր աշխարհաքաղաքական հավակնություններն իրագործելու նպատակով (այդօրինակ ձգտումներ են ցուցաբերում գերմանացիները, օրինակ, Աֆղանստանում), եւ նման պարագայում այդ հավակնությունները չպետք է որ հակասեն մեր ազգային շահերին: Դրա մասին են վկայում, մասնավորապես, հետեւյալ հանգամանքները.

❖ Գերմանիան մեր տարածաշրջանում չունի շեշտված նավթային շահեր, ինչը որոշիչ գործոն է այլ տերությունների քաղաքականությունում եւ վերջիններիս կողմից արտահայտվում է Ադրբեջանի նկատմամբ կողմնակալ վերաբերմունքով:

❖ Պաշտոնական Բեռլինը լուրջ խնդիրներ ունի Թուրքիայի հետ, եւ այստեղ դերակատարում ունի նաեւ այն փաստը, որ Գերմանիայում ապրում է շուրջ 3 մլն թուրք, որոնցից 1.7 մլն-ը Թուրքիայի քաղաքացի է, նրանց զգալի մասը սկզբունքորեն, իսկ մասամբ էլ հետեւելով Անկարայի ուղղակի ցուցումներին՝ չի ձգտում ինտեգրվել տեղի հանրությանը: Այդ գործոնը քաղաքակրթական եւ ժողովրդագրական բնույթի խնդիրներ է առաջացրել գերմանական հանրությունում, ինչն էլ մասամբ արտահայտվում է արտաքին քաղաքական մոտեցումներում:

**ԹՈՒՐՔԻԱ – ԵՎՐԱՍԻՈՒԹՅՈՒՆ
ՅԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ
ԲԵՆԻԱՄԻՆ ՊՈՂՈՍՅԱՆ**

Եվրամիությանն անդամակցության խնդիրը շարունակում է մնալ Թուրքիայի արտաքին քաղաքական առաջնահերթություններից մեկը, չնայած այն հանգամանքին, որ վերջին մի քանի տարիների ընթացքում այդ ուղղությամբ առաջընթացը գրեթե բացակայում է: Թուրքիան առաջին անգամ Եվրամիությանն անդամակցության խնդիրը բարձրացրել է հեռավոր 1959թ., երբ կառույցը կոչվում էր Եվրոպական տնտեսական համագործակցություն եւ բաղկացած էր ընդամենը վեց անդամից: Վերջին հիսուն տարիների ընթացքում Եվրոպայում արձանագրված տեկտոնիկ տեղաշարժերը (ԽՍՀՄ փլուզում, սառը պատերազմի ավարտ եւ այլն) լուրջ փոփոխություններ առաջ բերեցին նաեւ նշված կառույցում: Եվրամիությունն այսօր արդեն բաղկացած է 27 պետություններից, որոնցից 16-ը ընդգրկված է Եվրոյի միասնական գոտում:

Սակայն, չնայած այդ զգալի փոփոխություններին, Թուրքիայի անդամակցության հեռանկարը շարունակում է բավականին անորոշ մնալ: Այս խնդրում կտրուկ առաջընթացի հնարավորություն ստեղծվեց 2005թ., երբ պաշտոնապես տրվեց Եվրամիության անդամակցությանն ուղղված բանակցությունների մեկնարկը: Սակայն առաջին մի քանի տարիների խանդավառությունն այժմ փոխարինվել է կասկածամտության եւ անորոշության նոր փուլով: Նույնիսկ ամենալավատեսական կանխատեսումների համաձայն՝ Թուրքիան Եվրամիության լիարժեք անդամ կարող է դառնալ 2020-ից ոչ շուտ: 2002թ. նոյեմբերին Թուրքիայում իշխանության եկած Արդարություն եւ զարգացում կուսակցության առաջնորդները հայտարարում են, որ շարունակում են հակված մնալ անդամակցության գաղափարին անկախ ժամկետներից եւ պատրաստ են շարունակել անդամակցության պահանջների բավարարմանն ուղղված բարեփոխումները: Միաժամանակ, վերջին տարիներին գործընթացի ակնհայտ սառեցումը լուրջ փոփոխություններ է առաջ բերել երկրի հասարակական կարծիքում: Եթե 2004թ. Եվրամիությանն անդամակցությանը կողմ էր արտահայտվում Թուրքիայի բնակչության շուրջ 70 տոկոսը, ապա այժմ այդ թիվը չի գերազանցում 40 տոկոսը:

Ստեղծված իրավիճակն ունի մի շարք պատճառներ: Դրանցից մեկը Եվրամիության երկու առաջատար երկրների՝ Ֆրանսիայի եւ Գերմանիայի գործող ղեկավարների հստակ բացասական դիրքորոշումն է Թուրքիայի լիարժեք անդամակցության խնդրում: Թե՛ Նիկոլա Սարկոզին, թե՛ Անգելա Մարկելը բազմիցս արտահայտել են իրենց տեսակետն այդ հարցում՝ լիարժեք անդամակցության փոխարեն Թուրքիային առաջարկելով Եվրամիության հետ հաստատել «արտոնյալ գործընկերություն», ինչը միանշանակ մերժվում է Թուրքիայի ներկայիս քաղաքական ղեկավարության կողմից: Այս խնդրում կողմերի դիրքորոշումների տարբերությունը եւս մեկ անգամ ընդգծվեց 2010 թ. մարտի վերջին Անգելա Մերկելի՝ Թուրքիա եւ ապրիլի 6-7-ը Էրդողանի՝ Ֆրանսիա կատարած այցերի ընթացքում: Ֆրանսիական այցի ընթացքում կողմերն անգամ խուսափեցին համատեղ մամուլի ասուլիսի կազմակերպումից՝ չցանկանալով հրապարակային բնույթ տալ Թուրքիայի՝ Եվրամիության անդամակցության խնդրում կողմերի ունեցած տարաձայնություններին: Այնուամենայնիվ, Նիկոլա Սարկոզիի եւ վարչապետ Ֆրանսուա Ֆիյոնի հետ Էրդողանի հանդիպումներից հետո Ֆրանսիայի Եվրոպական հարցերի նախարար Պիեռ Լելուշը հայտարարել է, որ կողմերը չեն հաղթահարել այդ խնդրում առկա տարաձայնությունները, եւ Սարկոզին եւս մեկ անգամ հստակ արտահայտվել է Թուրքիայի՝ Եվրամիությանն անդամակցության դեմ: Ֆրանսիան հարգում է Եվրամիությանն անդամակցելու Թուրքիայի ձգտումը, սակայն իր սեփական տեսլականն ունի Եվրամիության ապագայի խնդրում, որը ենթադրում է Թուրքիա–Եվրամիություն սերտ համագործակցության հաստատում, բայց միաժամանակ բացառում է Թուրքիայի անդամակցությունը:

Իհարկե, սխալ կլիներ Ֆրանսիայի եւ Գերմանիայի նման դիրքորոշումը բացատրել միայն այդ պետությունների ղեկավարների անձնական տեսակետներով: Այստեղ զգալի դերակատարում ունեն հետեւյալ երկու գործոնները:

Նախ եւ առաջ, Եվրամիության անդամ երկրների բնակչության շրջանում աստիճանաբար նվազում է Թուրքիայի անդամակցությանը կողմ արտահայտվողների թիվը: Սոցիոլոգիական հարցումների համաձայն՝ Եվրամիության բնակչության միայն 30 տոկոսն է դրական տրամադրված Թուրքիայի անդամակցության խնդրում: Մի շարք երկրներում, այդ թվում նաեւ Գերմանիայում, այդ ցուցանիշն էլ ավելի ցածր է: Թուրքիայի անդամակցությունը Եվրամիության շարքային քաղաքացիների շրջանում հիմնականում ասոցիացվում է անօրինական միգրացիայի, Եվրոպական երկրներում մահմեդական բնակչության թվաքանակի հետագա աճի,

ինչպես նաև արմատական իսլամի եւ ահաբեկչությանն առնչվող խնդիրների հետ: Պատահական չէ, որ 2009թ. կայացած Եվրախորհրդարանի ընտրությունների ընթացքում բազմաթիվ կուսակցություններ հստակ դեմ էին արտահայտվում Թուրքիայի անդամակցությանը՝ ընտրողների հավելյալ ձայներ չահելու նպատակով: Նման պայմաններում Եվրամիության առանձին պետությունների առաջնորդները չեն կարող անտեսել սեփական երկրներում ձեւավորված հասարակական կարծիքը:

Թուրքիայի անդամակցության խնդրում Ֆրանսիայի եւ Գերմանիայի գործող իշխանությունների բացասական դիրքորոշումը պայմանավորված է նաև Եվրամիության քաղաքական ապագայի շուրջ ընթացող քննարկումներով: Գաղտնիք չէ, որ Եվրամիության ներսում կառույցի ապագայի շուրջ կան երկու մրցակցող տեսակետներ: Առաջինը Եվրամիության ապագան տեսնում է արտաքին հարաբերություններում եւ պաշտպանական անվտանգային ոլորտում միասնական քաղաքականություն իրականացնող, միմյանց հետ ամուր կապերով պետությունների դաշնություն, որը բոլոր հիմքերն ունի վերածվելու ապագա բազմաբեւեռ աշխարհի կենտրոններից մեկի՝ հավասար հարաբերություններ հաստատելով ԱՄՆ-ի եւ Չինաստանի հետ: Մյուս տեսակետի համաձայն՝ Եվրամիության հիմնական նպատակը տնտեսական միասնական քաղաքականության իրականացումն է, իսկ արտաքին հարաբերություններում եւ պաշտպանության ոլորտում կազմակերպության անդամ երկրները պետք է պահպանեն գործողությունների ազատությունը: Այն պետությունները, այդ թվում նաև Գերմանիան եւ Ֆրանսիան, որոնք հանդես են գալիս ապագայում առավել կենտրոնացված, արտաքին եւ անվտանգային ոլորտում միասնական քաղաքականություն իրականացնող կազմակերպության ձեւավորման օգտին, դեմ են արտահայտվում Թուրքիայի լիարժեք անդամակցությանը՝ պնդելով, որ այդ դեպքում Թուրքիան զգալի ազդեցություն կունենա քաղաքական կարելորագույն որոշումների ընդունման գործընթացի վրա, ինչը լուրջ խոչընդոտներ կստեղծի միասնական արտաքին եւ պաշտպանական քաղաքականության իրականացման համար:

Միաժամանակ, Եվրամիության այն անդամները, որոնք հակված են կազմակերպության ապագան տեսնել առավելապես միասնական տնտեսական քաղաքականություն իրականացնող կառույցի տեսքով, հիմնականում կողմ են արտահայտվում Թուրքիայի լիարժեք անդամակցությանը: Պետությունների այս խումբը գլխավորում է Մեծ Բրիտանիան, որը Թուրքիայի լիարժեք անդամակցության գլխավոր աջակիցներից մեկն է:

Թուրքիայի անդամակցության խնդրում առկա կարելու խոչընդոտներից մեկը Կիպրոսի խնդիրն է: 2004թ. ապրիլին կայացած հանրաքվեի ընթացքում կղզու թուրքական հատվածն ընդունեց, իսկ հունականը մերժեց ՄԱԿ գլխավոր քարտուղարի ներկայացրած կարգավորման ծրագիրը: Արդյունքում՝ 2004թ. մայիսին կղզու հունական հատվածը դարձավ Եվրամիության լիարժեք անդամ: Այժմ Կիպրոսի իշխանություններն ակտիվորեն օգտագործում են Թուրքիայի անդամակցության բանակցությունները՝ Կիպրոսի խնդրում Անկարայից հավելյալ զիջումներ կորզելու նպատակով: Իրենց հերթին, թուրքական իշխանությունները հայտարարում են, որ ՄԱԿ գլխավոր քարտուղարի ծրագրի ձախողման համար կղզու հունական հատվածը որեւէ պատասխանատվություն չկրեց՝ ընդգրկվելով Եվրամիության կազմում, իսկ թուրքական հատվածը, չնայած կողմ արտահայտվեց այդ ծրագրին, շարունակում է գտնվել փաստացի միջազգային մեկուսացման մեջ: Թուրքական իշխանությունները հրաժարվում են թուրքական նավահանգիստներ եւ օդանավակայաններ ընդունել Կիպրոսի հունական հատվածի նավերն ու ինքնաթիռները:

Թուրքիա – Եվրամիություն հարաբերությունների խնդիրը քննարկվել է հատուկ այդ նպատակով Եվրամիության կողմից ձեւավորված հանձնաժողովում, որը ղեկավարում էր Ֆինլանդիայի նախկին նախագահ Մարտի Ատիսարին: 2009թ. սեպտեմբերին հրապարակված զեկույցում հանձնաժողովը կոչ էր անում Եվրամիության անդամ երկրներին հստակ հայտարարել, որ անդամակցության ճանապարհը բաց է Թուրքիայի համար, իսկ պաշտոնական Անկարային առաջարկում էր շարունակել համապատասխան բարեփոխումների իրականացումը եւ հաղթահարել անցյալից մնացած ավտորիտար ժառանգությունը: Նշվում էր, որ Թուրքիան զգալիորեն ավելացրել է սեփական ազդեցությունը Մերձավորարեւելյան տարածաշրջանում, եւ վերջինիս հետ սերտ հարաբերությունների պահպանումը կնպաստի Մերձավոր Արեւելքում Եվրամիության դերակատարության աճին:

Թուրքիա – Եվրամիություն հարաբերություններում որոշակի լարվածություն է ձեւավորվել նաեւ Իրանի միջուկային ծրագրի առնչությամբ: Այն բանից հետո, երբ Իրանը մերժեց 2009թ. հոկտեմբերին 5+1 ձեւաչափին մասնակցող երկրների կողմից ուրանի հարստացումն արտերկրում կազմակերպելու առաջարկը, առաջին հերթին արեւմտյան տերությունները կողմ արտահայտվեցին ՄԱԿ Անվտանգության խորհրդում Իրանի դեմ նոր պատժամիջոցների կիրառմանը: Մինչդեռ Թուրքիան հստակ դեմ է այդ գաղափարին: Իրանի խնդրում առկա տարածայնություններն առաջին

անգամ որոշակի տեսք ստացան 2009թ. նոյեմբերին Ատոմային էներգիայի միջազգային գործակալության կառավարիչների խորհրդում Իրանի վերաբերյալ կայացած քվեարկության ժամանակ, երբ Թուրքիան, ի տարբերություն իր արեւմտյան դաշնակիցների եւ անգամ Ռուսաստանի, հրաժարվեց կողմ քվեարկել Իրանի իշխանություններին քննադատող բանաձեւին: Ներկայումս Թուրքիայի՝ ՄԱԿ Անվտանգության խորհրդի ոչ մշտական անդամի կարգավիճակն էլ ավելի է բարդացնում իրավիճակը: Արեւմտյան պետությունները՝ ԱՄՆ գլխավորությամբ, արդեն հայտարարել են 2010թ. գարնանը ՄԱԿ Անվտանգության խորհրդում Իրանի դեմ նոր պատժամիջոցներ սահմանող բանաձեւի քվեարկություն անցկացնելու մտադրության մասին: Այդ բանաձեւին Թուրքիայի դեմ կամ նույնիսկ ձեռնպահ քվեարկումը էլ ավելի կբարդացնի վերջինիս հարաբերությունները թե՛ ԱՄՆ-ի եւ թե՛ Եվրամիության անդամ պետությունների հետ:

Թուրքիա–Եվրամիություն հարաբերությունների խնդրում որոշակի դերակատարում ունի նաեւ ԱՄՆ դիրքորոշումը: Այս խնդիրը, թերեւս, այն բացառիկ դեպքերից է, երբ Ջորջ Բուշ կրտսերի եւ Բարաք Օբամայի վարչակազմերի դիրքորոշումները գրեթե չեն տարբերվում: Երկու վարչակազմերն էլ միանշանակ կողմ են արտահայտվում Թուրքիայի Եվրամիությանն անդամակցության խնդրին: Տարբերությունը, թերեւս, մոտեցման մեջ է:

Եթե Բուշ կրտսերի վարչակազմը հաճախ կոչ էր անում Եվրամիության անդամ պետություններին ավելի բարյացակամ դիրքորոշում որդեգրել Թուրքիայի հանդեպ, փոխել վարվող քաղաքականությունը, ինչը պատճառ էր դառնում, որպեսզի թե՛ Եվրամիության ղեկավար շրջանակները, թե՛ հանրային կարծիքը ԱՄՆ-ին մեղադրեին Եվրամիության ներքին գործերին բացահայտ միջամտելու փորձերի մեջ, ապա Օբամայի վարչակազմի ներկայացուցիչներն այս թեմայի մասին խոսելիս՝ ամեն անգամ նշում են, որ ԱՄՆ-ը այդ հարցում որոշում ընդունող չէ, եւ իրենք միայն սեփական տեսակետն են արտահայտում: Այդ մասին հստակ հայտարարեց ԱՄՆ պետքարտուղարի օգնական Ֆիլիպ Գորդոնը 2010թ. փետրվարի 17-ին Չարվարդի Քենեդու անվան կառավարման դպրոցում ունեցած ելույթում, որը նվիրված էր Չարավարեւելյան Եվրոպայում ԱՄՆ-ի կողմից իրականացվող քաղաքականությանը: Այդ համատեքստում անդրադառնալով Թուրքիայի՝ Եվրամիությանն անդամակցության խնդրին՝ Գորդոնը նշեց, որ ԱՄՆ-ը հստակ գիտակցում է, որ այդ խնդրում վերջնական որոշում ընդունողը Եվրամիությունն է: Միաժամանակ նա հայտարարեց, որ պաշտոնական Վաշինգտոնն աջակցում է Թուրքիայի՝ Եվրամիությանն

անդամակցության գործընթացին եւ կոչ է անում թուրքիային շարունակել ժողովրդավարական եւ քաղաքական բարեփոխումների իրականացումը, որոնք անհրաժեշտ են անդամակցության համար: Պաշտոնական Անկարայի կողմից իրականացվելիք անհրաժեշտ քայլերի թվում Գորդոնն առանձնահատուկ շեշտեց քրդական հարցում Էրդողանի կառավարության նախաձեռնած բարեփոխումների շարունակումը, ինչպես նաեւ Կիպրոսի խնդրում փոխզիջումային լուծման ձեռքբերումը:

Գորդոնը թուրքիայի՝ Եվրամիությանն անդամակցության խնդրին անդրադարձավ նաեւ 2010թ. մարտի 17-ին Բրուքլինգս հաստատությունում ունեցած ելույթում, որտեղ նա ներկայացրեց Օբամայի վարչակազմի քաղաքականությունը թուրքիայի նկատմամբ: Այստեղ եւս Գորդոնը շեշտեց, որ ԱՄՆ կարծիքով՝ Եվրամիության անդամակցության չափանիշերին համապատասխանող թուրքիան օգտակար կլինի Եվրամիության համար, եւ միաժամանակ այդ չափանիշերին համապատասխանելու նպատակով թուրքիայի կողմից իրականացվող բարեփոխումներն օգտակար են առաջին հերթին թուրքիայի համար:

Ամփոփելով՝ կարելի է նշել, որ ներկայումս թուրքիայի՝ Եվրամիությանն անդամակցության գործընթացը գրեթե սառեցված վիճակում է: Ավելի քան չորս տարի շարունակվող բանակցությունների ընթացքում առայժմ քննարկվել է անդամակցության տարբեր ոլորտներ կարգավորող երեսունհինգ գլուխներից միայն տասնմեկը, ընդ որում՝ բանակցություններն ավարտվել են դրանցից մեկի՝ գիտությանն առնչվող գլխի վերաբերյալ: Եվս ութ գլուխների առնչությամբ բանակցությունները պաշտոնապես արգելափակված են կիպրոսյան խնդրի առնչությամբ:

Ակնհայտ է, որ առաջիկա տարիներին անդամակցության գործընթացում էական տեղաշարժերի արձանագրումը քիչ հավանական է: Թուրքիան մտադիր չէ զիջումներ կատարել Կիպրոսի խնդրում: Միաժամանակ, նա հստակորեն մերժում է Գերմանիայի եւ Ֆրանսիայի առաջարկը «արտոնյալ գործընկերության» հաստատման վերաբերյալ: Անգելա Մերկելի՝ Թուրքիա կատարած այցից մի քանի օր առաջ գերմանական հեղինակավոր «Շպիգել» ամսագրին տված հարցազրույցում Էրդողանը հայտարարեց, որ Եվրամիությունը չի կարող խաղի կեսից փոխել խաղի կանոնները՝ նման վարվելակերպը համենատեղով ֆուտբոլային խաղի ընթացքում տուգանային հարվածի կանոնների փոփոխության հետ:

Ամենայն հավանականությամբ, կշարունակվի նաեւ թուրքիայում Եվրամիությանն անդամակցության գաղափարի կողմնակիցների նվազման եւ Եվրամիության անդամ երկրներում թուրքիայի անդամակցության

հակառակորդների աճի միտումը: Առաջիկա տարիներին կպահպանվի նաեւ Եվրամիության ապագայի շուրջ առկա տարբեր տեսլականների միջեւ նրցակցությունը, ինչը հավելյալ խոչընդոտներ կստեղծի Թուրքիայի անդամակցության ճանապարհին: Միեւնույն ժամանակ, գործընթացի պաշտոնական դադարեցումը Եվրամիության կամ Թուրքիայի կողմից քիչ հավանական է, քանի որ երկու կողմերն էլ չեն ցանկանում գնալ հարաբերությունների կտրուկ սրացման: Եվրամիությանն անդամակցության գործընթացի ներկայիս բավականաչափ դանդաղ տեմպերը կշարունակվեն՝ հնարավորություն ընձեռելով թե՛ Թուրքիային, թե՛ Եվրամիությանը, թե՛ ԱՄՆ-ին այս խնդրի շուրջ հետագա սակարկությունների շարունակման համար:

**ԵՎՐՈՊԱՅԻ ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԸ.
ՀԱՐՑԻ ԱՐԴԻՎԿԱՆԱՑՈՒՄ
Արաքս Փաշայան**

Եվրոպայի թուրքական համայնքները սկսել են ձեւավորվել 20-րդ դարի 60-ականներից: Հետպատերազմյան շրջանում Եվրոպայում տնտեսության առանձին ոլորտներ, այդ թվում՝ արդյունաբերությունը, էժան աշխատուժի կարիք ունեին: Խնդիրը լուծվեց ասիական եւ աֆրիկյան մի շարք երկրներից Եվրոպա մեկնող աշխատանքային էմիգրանտների հաշվին: Նրանց մի մասը Թուրքիայի քաղաքացիներ էին՝ ծագումով թուրք եւ այլ էթնիկ խմբերի ներկայացուցիչներ:

Մինչեւ 1970-ականները աշխատանքային ներգաղթողները տղամարդիկ էին: Նրանք մեծ մասամբ գյուղացիներ էին՝ Անատոլիայի տարբեր շրջաններից, որոնք հավատարիմ էին իրենց ծննդավայրի ավանդույթներին եւ, որպես կանոն, ինքնորոշվում էին ազգային պատկանելությամբ: 1973-ին Եվրոպայում սկիզբ առած տնտեսական դժվարություններից եւ մասնավորապես գործազրկության կտրուկ աճից հետո տեղական կառավարությունները, փորձելով մեղմել սոցիալական լարվածությունը, ընդունեցին ներգաղթը սահմանափակող օրենքներ, ինչը, սակայն, հակառակ նշանակություն ունեցավ: Նույնիսկ անգործ մնացած ներգաղթողները որոշեցին հաստատվել Եվրոպական երկրներում՝ մտավախություն ունենալով, որ հայրենիք հետ գնալուց հետո այլեւս չեն կարողանա վերադառնալ Եվրոպա: Այդ փաստն առաջ բերեց ընտանիքների միավորման եւ նորերի ձեւավորման իրողություն, ինչն այլեւս հաստատուն դարձրեց թուրքական տարրի ներկայությունը Հին մայրցամաքում:

Հատկանշական է, որ մուսուլման ներգաղթողներին նոր՝ օտար միջավայրում աստիճանաբար սկսեց միավորել կրոնական գործոնը: Հատկապես աշխատանք գտնելու, նաեւ՝ տարաբնույթ այլ հարցերում ենթարկվելով խտրության եւ վերապրելով հոգեբանական դժվարություններ՝ թուրք ներգաղթողներն սկսեցին մեկուսանալ փակ համայնքներում (գետտոներում), որը դարձավ ազգային եւ կրոնական ավանդույթները պահպանելու եւ օտար շրջապատից «պաշտպանվելու» լավագույն միջավայրը:

Եվրոպայի, մասնավորապես Գերմանիայի թուրքական համայնքներն առանձնանում են իրենց բնորոշ գծերով: Հիմնականում համայնքային գիտակցությամբ ապրող թուրքերի համար հասարակական կյանքի

կենտրոնական տարրը մզկիթներն են, նաեւ՝ թուրքական սրճարանները, ռեստորանները, մսավաճառի կրպակները, «հալալ» սիստեմի խանութները, թուրքական ապրանքներ վաճառող առեւտրական կետերը: Թուրքական տների մեծ մասում կան արբանյակային կապով հեռարձակվող թուրքական հեռուստաալիքներ, ստացվում են թուրքական թերթեր, ասենք՝ «Չաման» կամ «Յուրիյեթ»: Բացի այդ, կան բազմաթիվ թուրքական կազմակերպություններ, որոնց մի մասը գործում է կրոնական եւ բարեգործական շղարշի տակ, անմիջական աջակցություն ստանում Անկարայից: Եվրոպական, հատկապես՝ գերմանական շատ քաղաքներում եւ բնակավայրերում գոյություն ունեն փոքրիկ Ստամբուլ կամ Իզմիր հիշեցնող թաղամասեր: Նշենք նաեւ, որ թուրքական ընտանիքներում տիրապետող են ավանդական արժեքները, թուրք կանայք եւ աղջիկները շատ հաճախ կրոնական գլխաշոր են կրում:

Ներկայումս Եվրոպայում ապրում են թուրք էմիգրանտների երկրորդ, երրորդ եւ նույնիսկ՝ չորրորդ սերունդները, որոնք Եվրոպական երկրների քաղաքացիներ են եւ էապես տարբերվում են իրենց ծնողներից, քանի որ նրանցից շատերը ստացել են Եվրոպական կրթություն, խոսում են տվյալ երկրի լեզվով, ծանոթ են տեղական մշակույթին: Չնայած ներգաղթողների մի հատվածին հաջողվել է լավագույնս ինտեգրվել Եվրոպական միջավայրում՝ ներգրավվելով կյանքի ամենատարբեր ոլորտներում, սակայն, այնուամենայնիվ, նրանց մի զգալի մասը ինտեգրման հետ կապված լուրջ դժվարություններ ունի:

Խնդիրը, թերեւս, այն է, որ ներգաղթողները, շատ դեպքերում, համարժեք չեն ընկալվում Եվրոպացիների կողմից: Մասնավորապես, գլխաշոր կրող աղջիկների համար կրթություն ստանալու, ինչպես նաեւ աշխատանք գտնելու հետ կապված դժվարությունները, նաեւ Եվրոպական առանձին շրջանակների ոչ միանշանակ վերաբերմունքը մզկիթների կամ մինարեների շինարարությանը, ներգաղթողների շրջանում ի հայտ են բերում Եվրոպական հասարակությունների կողմից օտարված լինելու գիտակցություն: Այդ տեսանկյունից հետաքրքրություն են ներկայացնում վերջերս Pew Research Center-ի հարցախույզի տվյալները, համաձայն որոնց՝ մեծ թիվ են կազմում այն Եվրոպացիները, որոնք բացասաբար են վերաբերվում մուսուլմաններին:

Բացի այդ, թուրքական ծագում ունեցող ներգաղթողների շրջանում գործազրկության բարձր ցուցանիշները, կրթվածության ոչ անհրաժեշտ մակարդակը, խզումը սեփական՝ պահպանողական եւ Եվրոպական՝ ազատական արժեքների միջեւ, ավելի են դժվարացնում ինտեգրման գործընթացը՝ նպաստելով կրոնականացվածությանը:

Ներկայումս Արեւմտյան Եվրոպայում, ըստ տարբեր տվյալների, ապրում է ընդհուպ մինչեւ 4,5 միլիոն թուրք՝ հիմնականում Գերմանիայում, Բելգիայում, Նիդեռլանդներում, Ավստրիայում, Ֆրանսիայում, Շվեյցարիայում, Դանիայում, Շվեդիայում: Եվրամիության երկրներից թուրքական ամենամեծ համայնքը Գերմանիայում է, եւ պատահական չէ, որ հենց Գերմանիան է դարձել թուրքական սփյուռքին վերաբերող հիմնահարցերի կիզակետը: Այդ երկրում ներկայումս բնակվում է մոտ 2-3 միլիոն թուրք, որոնք, միեւնույն ժամանակ, Գերմանիայի ամենամեծ էթնիկ փոքրամասնությունն են: Ուսումնասիրությունները, սակայն, ցույց են տալիս, որ թուրքերը Գերմանիայում վատ են ինտեգրված, բավական մեծ է քաղաքացիություն չունեցողների թիվը: Թուրք ներգաղթողների մեծ մասը դժգոհ է իր վիճակից, հասարակության մեջ զբաղեցրած դիրքից, ինտեգրման ուղղությամբ Գերմանիայի քաղաքականությունից:

Իրենց հերթին, իշխանությունները նշում են, որ հասարակության մեջ թուրքերի ապահինտեգրվածության պատճառը սեփական մշակույթին եւ ավանդույթներին կառչած մնալն է, նաեւ, որոշ դեպքերում, ինտեգրման ցանկության բացակայությունը, գերմաներենի ոչ բավարար իմացությունը: Շատ հետազոտողներ նշում են, որ նույնիսկ 50 տարի Գերմանիայում բնակվող թուրք ներգաղթողները չեն կարողացել ինտեգրվել եւ գերմանական հասարակության մեջ իրենց առանձին խումբ են զգում:

Այսօր եվրոպական կառավարությունների առաջ ծառայած ամենաբարդ խնդիրներից մեկը ժողովրդագրական բարձր ցուցանիշներ ունեցող մուսուլման, այդ թվում՝ թուրք ներգաղթողների ինտեգրման հարցն է, որի վերաբերյալ մշակվել են բազմաթիվ հայեցակարգեր:

Հատկանշական է, որ Եվրոպայում թուրքական սփյուռքի խնդիրները միշտ էլ (նաեւ այժմ) թուրքական իշխանությունների օրակարգում են: Դեռեւս 1980-ականներից Թուրքիայի կրոնական հարցերով զբաղվող պետական մարմինը, որն առավելապես հայտնի է Դիյանեթ անունով, պարբերաբար իմամներ է ուղարկում Եվրոպայի թուրքական համայնքներ՝ օգնելու, որպեսզի թուրքական համայնքի ներկայացուցիչները պահպանեն ավանդական՝ կրոնական եւ բարոյական արժեքները: Իմամները նաեւ փորձում են կարգավորել համայնքում առաջացած խնդիրներն ու միջանձնային հարաբերությունները: Շատ դեպքերում իմամները չեն տիրապետում հյուրընկալող երկրի լեզվին, մշակույթին, աչքի են ընկնում իրենց պահպանողական հայացքներով եւ տեղերում էլ ավելի նպաստում արմատական տրամադրությունների ձեւավորմանն ու ամրապնդմանը:

Նշենք, որ Եվրոպայում բնակվող թուրքերի հարցը որոշակիորեն արդիականացավ ԵՄ-ին Թուրքիայի անդամակցության գործընթացի հետ

կապված: Վարչապետ Էրդողանը մեկ անգամ չէ, որ անդրադարձել է Եվրոպայի թուրքական սփյուռքի հիմնախնդիրներին, մասնավորապես, հանդես եկել Գերմանիայում թուրքական դպրոցներ եւ համալսարաններ բացելու, Թուրքիայից Գերմանիա ուսուցիչներ ուղարկելու, ինչպես նաեւ Գերմանիայում երկրադաքացիության սկզբունքն ամրագրելու օգտին:

Այդ տեսանկյունից առանձնահատուկ կարեւորություն ունի 2008թ. փետրվարի 10-ին Քյոլնում թուրքական ծագմամբ մոտ քսան հազար ներգաղթողների առաջ Էրդողանի ունեցած ելույթը, որի ժամանակ վերջինս ընդգծեց Գերմանիայում թուրքերի ինտեգրման, բայց միեւնույն ժամանակ թուրքական մշակույթն ու ինքնությունը պահպանելու, այլ կերպ ասած՝ թուրք մնալու անհրաժեշտությունը: Էրդողանը սենսացիոն հայտարարություն արեց՝ նշելով, որ թուրքերի «ասիմիլյացիան հանցագործություն է մարդկության դեմ»:

Էրդողանի հնչեցրած տեսակետը քննադատության ալիք առաջացրեց Գերմանիայի իշխող ընտրանու եւ քաղաքական գործիչների շրջանում: Վերջիններիս, այդ թվում Գերմանիայի կանցլեր Ա.Մերկելին, զարմացրել էր այն փաստը, որ իր երկրին առնչվող կարեւորագույն հարցերից մեկը՝ կապված ինտեգրման հետ, փորձ է անում կարգավորել Անկարան: Գերմանացի մի շարք քաղաքական գործիչներ այդ օրերին հայտարարեցին, որ ասիմիլացման խնդիր Գերմանիայում գոյություն չունի, խոսքը ինտեգրման մասին է, ինչը նկատի է առնում համահավասար ընդգրկվածություն, գերմանական արժեքների ճանաչում, իսկ ինտեգրվելը, առավել եւս ասիմիլացվելը, յուրաքանչյուր անհատի խնդիրն է:

Հետաքրքրություն է ներկայացնում այն փաստը, որ մինչեւ վերջերս Գերմանիայի կանցլերը եւ գերմանական քաղաքական մի շարք շրջանակներ դեմ էին Գերմանիայում թուրքական դպրոցների բացմանը՝ որպես ինտեգրմանը խոչընդոտող հանգամանք: Այդ դիսկուրսը նորից ակտիվացավ 2010-ի մարտին, Մերկելի՝ Թուրքիա կատարած այցի նախօրեին: Մարտի 17-ին Էրդողանը կոչ արեց Գերմանիայի թուրքերին չձուլվել գերմանական հասարակությանը, այլ՝ թուրքական մշակույթը դարձնել գերմանացիների սեփականությունը:

Մարտի վերջին ժամանելով Թուրքիա՝ Գերմանիայի կանցլերը հայտարարեց, որ համաձայն է իր երկրում թուրքական դպրոցներ բացելու Թուրքիայի վարչապետի առաջարկին՝ պայմանով, որ թուրքական դպրոցներում ուսուցումը, այնուամենայնիվ, լինի երկլեզու՝ հնարավորություն տալով թուրք դպրոցականներին գերմաներեն սովորել: Նման քայլով Մերկելը, ըստ ամենայնի, փորձեց որոշ իմաստով փոխհատուցել ԵՄ-ին Թուրքիայի անդամակցության իր երկրի մերժումը:

Անհերքելի է այն փաստը, որ թուրքական ներկա իշխանությունները ձգտում են օգտագործել Եվրոպայի թուրքական համայնքի ռեսուրսն Անկարայի համար կարելություն ներկայացնող արտաքին քաղաքական մի շարք խնդիրներում (մասնավորապես, ԵՄ-ին անդամակցելու հարցում): Ասվածի ապացույցն է նաև 2010-ի փետրվարին կառավարող Արդարություն եւ զարգացում կուսակցության՝ «Որտեղ մեր քաղաքացին է, այնտեղ էլ մենք ենք» վերտառությամբ Ստամբուլում կազմակերպված համագումարը, որին մասնակցեց շուրջ 1500 պատվիրակ՝ Եվրոպայում բնակվող ծագումով թուրք պետական, քաղաքական եւ կրոնական գործիչներ, բիզնեսմեններ, ՀԿ ներկայացուցիչներ: Նրանց կոչ արվեց իրենց բնակության երկրներում Թուրքիայի օգտին ակտիվ քարոզչություն իրականացնել:

Ըստ Շափգել Օնլայն կայքէջի, համագումարի մասնակիցների ճանապարհորդության եւ կեցության ծախսերն ամբողջովին հոգացել են իշխանությունները: Իր ելույթում Էրդողանը նշել է, որ թուրքերը պետք է ընդունեն իրենց նոր հայրենիքի քաղաքացիությունը՝ առանց այդ հասարակության մեջ վերջնական ինտեգրման, եւ պահպանեն քաղաքական ակտիվությունը: Հանդիպման շրջանակներում թուրքական կառավարության պաշտոնյաներից մեկը նշել է, որ իրենք պետք է Եվրոպական մշակույթը պատվաստեն թուրքականով:

Չնայած Եվրոպայի թուրքական սփյուռքի՝ Անկարային ցուցաբերվող աջակցությանը, կան նաև շրջանակներ, որոնք ոչ միայն քննադատում են իշխող կուսակցության ներքին եւ արտաքին քաղաքականությունը, այլև Անկարայի մոտեցումը Եվրոպայի թուրքական սփյուռքին:

Ինչպես նշված է Շափգել Օնլայնի նույն նյութի մեջ, Գերմանիայի ալեւիական համայնքի փոխնախագահ Ալի Էրթան Թոփրակը նշել է, թե իր համար անընդունելի է, որ թուրքական կառավարությունն այդպես բացահայտորեն է խոսում Գերմանիայի թուրքերի կողմից թուրքական շահերի պաշտպանությանը հետամուտ լինելու հրամայականի մասին: Թոփրակի կարծիքով՝ եթե Եվրամիությանը Թուրքիայի անդամակցության ընդդիմախոսները ներկա գտնվեին համագումարին, իրենց փաստարկների համար հիմնավոր նյութ կհավաքեին:

Գերմանիայի Սոցիալ-դեմոկրատական կուսակցությունից Եվրախորհրդարանի նախկին պատգամավոր Վուրալ Օղերի համոզմամբ՝ թուրքական կառավարությունն ավելի շատ ուշադրություն պետք է դարձնի Թուրքիայում ապրող թուրքերին, քան փորձի օգտագործել թուրք գերմանացիներին՝ որպես իր դեսպանների: Կանաչների կուսակցությունից Բունդեսբազի անդամ Էքին Դելիգյոզը նշել է, որ ինքը դեմ է Գեր-

մանհայում ներկայացնել թուրքական կառավարության հետաքրքրությունները միայն այն բանի համար, որ ծնվել է թուրքիայում:

Ըստ ծագումով թուրք գերմանացի մի շարք քաղաքական գործիչների՝ միանգամայն հասականալի է թուրքական կառավարության ձգտումը՝ կապեր հաստատել ծագումով թուրք գործիչների եւ Բունդեսբազի անդամների հետ՝ նրանց որպես կամուրջ օգտագործելու համար, սակայն, ինչպես նշում է Կանաչների կուսակցությունից Սեհմեթ Քըլըչը, անընդունելի է, որ Անկարան բացահայտորեն ձգտում է այդ գործիչներին դարձնել թուրքական հետաքրքրությունների խոսափողը:

Շատերը համոզված են, որ Անկարան ձգտում է Եվրոպայում կենսունակ պահել թուրքականությունը, որի ապացույցը երկքաղաքացիության, նաեւ՝ Գերմանիայում թուրքական դպրոցներ բացելու գաղափարն է, որին, ի դեպ, դեմ են նաեւ թուրքական ծագումով գերմանացի շատ գործիչներ: Վերջիններս կարծում են, որ Անկարան Եվրոպայի թուրքերին դիտարկում է որպես իր երկրի քաղաքացիներ: Իրենց հերթին, գերմանական առանձին քաղաքական շրջանակներ Երդողանի գործողություններում տեսնում են Գերմանիայի տարածքում Անկարայի կողմից ղեկավարվող քաղաքական շարժում ստեղծելու մտադրություն:

Նշենք նաեւ, որ Անկարան փորձում է լավագույնս օգտագործել Արեւմուտքի թուրքական սփյուռքի ռեսուրսը՝ ձախողելու Եվրոպայում Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացը: Ասվածի ապացույցներից մեկը 2010թ. մարտին Հայոց ցեղասպանությունը ճանաչող Շվեդիայի խորհրդարանի բանաձեւի ընդունումից հետո Ստոկհոլմում թուրքական կազմակերպությունների բողոքի ակցիան էր:

Ի դեպ, վերջին շրջանում Եվրոպայում թուրքական եւ ադրբեջանական կազմակերպությունները բողոքի համատեղ ակցիաներ են անցկացրել նաեւ հայ-թուրքական արձանագրությունների վավերացման դեմ: Բացի այդ, նրանց համատեղ ջանքերով Ղարաբաղի հարցի առնչությամբ Ադրբեջանի օգտին ակտիվ քարոզչություն է տարվում:

Կարելի է ասել, որ հաշվի առնելով թուրքիայի առաջ ծառայած լուրջ խնդիրները՝ ԵՄ-ին անդամակցություն, Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչում, Կիպրոսի հարցը, քրդական կնճիռը եւ այլն, Անկարան ապագայում եւս կփորձի օգտագործել Եվրոպայի թուրքական սփյուռքի ռեսուրսը՝ հօգուտ իր հետաքրքրությունների:

**ԹՈՒՐՔԱԿԱՆ ԼՈՐՔԻՆԳԸ ԱՄՆ-ՈՒՄ.
ՉԱԿԱՅԱՅԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԻԲՐԵՎ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ
Կարեն Վերանյան**

Ըստ ԱՄՆ Արդարադատության նախարարության լրբբիստական խմբերի վերաբերյալ 2008թ. տարեկան հաշվետվության՝ Թուրքիան լրբբիստական գործունեությանը հատկացրած ծախսերով (\$4,2 մլն) զիջել է միայն Արաբական Միացյալ Էմիրություններին (\$11 մլն), Մեծ Բրիտանիային (\$6 մլն) եւ ճապոնիային (\$4,23 մլն): Թուրքական շահերը պաշտպանող լրբբիստներն առավել ակտիվ գործունեություն են ծավալել 2007թ. վերջին, երբ Կոնգրեսում քննարկման էր դրվել Օսմանյան կայսրության կողմից հայերի դեմ իրականացված ցեղասպանության ճանաչման օրինագիծը: Մեկ ամսվա ընթացքում նրանք 673 հանդիպում են ունեցել կոնգրեսականների ու հրեական լրբբինգի ներկայացուցիչների հետ:

ԱՄՆ թուրքական լրբբիստական խմբերը գործունեություն են ծավալում երկու հիմնական ուղղությամբ.

ա) հայ-թուրքական եւ հայ-ադրբեջանական հարաբերություններ, ինչը ենթադրում է՝ հակազդել ԱՄՆ Կոնգրեսում եւ գործադիր իշխանությունում Չայոց ցեղասպանության միջազգային ճանաչման հարցի ցանկացած քննարկման, խոչընդոտել ԱՄՆ-ՀՀ, ԱՄՆ-ԼՂՀ համագործակցության խորացմանն ու ցուցաբերվող ֆինանսական աջակցությանը, հակազդել ԱՄՆ հայկական լրբբինգին ու նրա ազդեցությանը ԱՄՆ-Թուրքիա հարաբերությունների ուղղությամբ:

բ) ԱՄՆ-Թուրքիա հարաբերություններ, որը ենթադրում է ամրապնդել ԱՄՆ-Թուրքիա ռազմաքաղաքական, ռազմավարական համագործակցությունը, ապահովել Միացյալ Նահանգներից Թուրքիային տրամադրվող ռազմատեխնիկական, տնտեսական եւ այլ տեսակի աջակցություն:

ԱՄՆ-ում թուրքական շահերի առաջնդման գործում էական դեր ունի Թուրքիայի եւ ԱՄՆ թուրքերի հարցերով կոնգրեսական հանձնախումբը: Այն ստեղծվել է կոնգրեսականներ Ռոբերտ Վեքսլերի (դեմոկրատ, Ֆլորիդա), Էդ Ուայթֆիլդի (հանրապետական, Քենթուքի) եւ Քեյ Գրենգերի (հանրապետական, Տեխաս) կողմից 2001թ. մարտին: Հանձնախումբը երկկուսակցական համակարգով գործող օրենսդրական կառույց է, որը

ներգրավված է ԱՄՆ–Թուրքիա հարաբերությունների եւ Միացյալ Նահանգներում բնակվող թուրքական համայնքի ու Թուրքիայի շահերի պաշտպանության խնդիրներում: 2010թ. մարտի 2-ի դրությամբ հանձնախմբի անդամները 104-ն են. ըստ նրանց նահանգային պատկանելության, առջեւում են Տեխասի կոնգրեսականները՝ 13 անդամ, որոնց հաջորդում են Յյուսիսային Կարոլինայի եւ Փենսիլվանիայի կոնգրեսականները՝ համապատասխանաբար 9 եւ 6 անդամ:

Հանձնախմբում կան անդամներ, որոնք նաեւ Կոնգրեսի հայկական հարցերով խմբի անդամներ են: Կոնգրեսականների ներկայացվածությունը միաժամանակ երկու եւ ավելի լոբբիստական խմբերում առավելապես պայմանավորված է հետեւյալ հանգամանքով. գործելով տարբեր խմբերում, իսկ ավելի հաճախ՝ այն խմբերում, որոնք միմյանց հետ շաղկապված են լոբբիստական ուղղվածությամբ (հայկական եւ թուրքական, հունական եւ թուրքական խմբեր), կոնգրեսականները արտաքին կամ ներքին քաղաքականության խնդիրներում կարողանում են լինել առավել տեղեկացված եւ ճկուն՝ կոնգրեսական խմբերի հետ փոխհարաբերություններում:

ԱՄՆ Կոնգրեսում թուրքական շահերը պաշտպանում են այնպիսի հեղինակավոր լոբբիստական կազմակերպություններ, ինչպիսիք են Neusner Communications-ը, Fleishman-Hillard-ը, Livingston Group-ը, Jones Walker-ը: Այդ ընկերությունների աշխատանքները կոորդինացնում է ԱՄՆ–Թուրքիա բարեկամության միջխորհրդարանական խմբի համանախագահ, նախկին դեմոկրատ կոնգրեսական, «Խաղաղություն Մերձավոր Արեւելքում» վերլուծական կենտրոնի ղեկավար Ռոբերտ Վեքսլերը:

Կոնգրեսում հակահայ լոբբիստական գործունեությամբ աչքի է ընկնում Livingston Group ընկերությունը, որը սերտորեն համագործակցում է Թուրքիայի կառավարության եւ թուրքական լոբբիստական խմբերի հետ: Ընկերությունը հիմնադրվել է 1999թ. նախկին կոնգրեսական Ռոբերտ Լիվինգսթոնի կողմից: Համագործակցում է այնպիսի կազմակերպությունների, կառավարությունների եւ քաղաքական գործիչների հետ, ինչպիսիք են Ջորջ Վաշինգտոնի անվան համալսարանը, Ռոլս Ռոյսը, Թուրքիայի կառավարությունը, Լոքհիդ Մարտինը, Լիբիայի նախագահ Մուամար Քադաֆին: Livingston Group-ը սերտ կապեր է հաստատել Անկարայի հետ՝ վերջինիս շահերը ԱՄՆ գործադիր ու օրենսդիր իշխանությունում լոբբինգի ենթարկելու նպատակով: 2000 թվականից սկսած՝ ընկերությունը Թուրքիայի կառավարությունից ստացել է ավելի քան \$13 մլն՝ Միացյալ Նահանգներում հակահայ լոբբիստական գործունեություն ծավալելու

նպատակով (հիմնականում Ցեղասպանության հարցում): Միայն 2006թ. Livingston Group-ը Թուրքիայի հետ ստորագրել է \$1,8 մլն արժողությամբ մեկ տարվա պայմանագիր: Ներկայում ընկերությունն ակտիվորեն ներգրավված է Օբամայի վարչակազմում, կապեր ունի ԱՄՆ Կոնգրեսի երկու պալատներում: Թուրքական շահերի առաջնդման հարցում Livingston Group-ն ակտիվորեն համագործակցում է նաև Jones Walker ընկերության հետ՝ համաձայն 1999թ. նրանց միջեւ ձեւավորված «ռազմավարական դաշնակցային հարաբերությունների»:

Gephardt Group-ը Թուրքիայի հետ համագործակցում է գլխավորապես ԱՄՆ օրենսդիր եւ գործադիր իշխանությունում Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացի խափանման եւ այդ փաստի մերժման ուղղությամբ: Ընկերությունը 2007թ. հիմնադրել է նախկին կոնգրեսական Ռիչարդ Քեֆարդը: Լոբբիստական այս հեղինակավոր ընկերության հետ համագործակցել են «Բոինգ»-ը, «Վիզա»-ն եւ այլն: (Վերջերս ընկերության լոբբիստական ծառայություններից սկսել է օգտվել նաև Վրաստանի կառավարությունը: Վերջինս 2010թ. հունվարին տարեկան \$440 հազարի պայմանագիր ստորագրեց Ռիչարդ Քեֆարդի հետ՝ ԱՄՆ Կոնգրեսում եւ գործադիր իշխանությունում Վրաստանի շահերի պաշտպանության նպատակներով):

DLA Piper ընկերությունը 2007թ. Անկարայից ստացել է շուրջ \$1,2 մլն՝ Կոնգրեսում Հայոց ցեղասպանության ճանաչման հարցի շուրջ քննարկումների կանխման նպատակով: 2008թ. Թուրքիայի կառավարության հետ համագործակցության զարգացման գործում զգալի է եղել ընկերության քաղաքական հարցերով ավագ խորհրդական Ռիչարդ Արմիի դերը: Նշենք, որ այս կազմակերպությունը 2009թ. լոբբիստական գործունեությունից ստացել է \$10 մլն 560 հազար մլն եկամուտ:

ԱՄՆ թուրքական լոբբինգն ակտիվացավ նաև ս.թ. մարտի սկզբներին՝ կապված Ներկայացուցիչների պալատի Արտաքին հարաբերությունների հանձնաժողովում մարտի 4-ին քվեարկության դրված 252-րդ բանաձեւի հետ, ինչի արդյունքում մոբիլիզացվեցին թուրքական շահերը պաշտպանող մի շարք խոշոր ամերիկյան ընկերությունների ռեսուրսները: Բանաձեւի քվեարկության նախօրեին ԱՄՆ ավիացիոն եւ պաշտպանական արդյունաբերության մի շարք կորպորացիաներ նամակով դիմեցին Ներկայացուցիչների պալատի Արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ Յովարդ Բերմանին եւ հանձնաժողովի անդամներին՝ հորդորելով չընդունել Հայոց ցեղասպանությունը ճանաչող օրինագիծը, որը կարող է վտանգել ամերիկյան արտահանումները դեպի Թուրքիա:

Lockheed Martin, Boeing, Raytheon, United Technologies եւ Northrop Grumman կորպորացիաները համատեղ նամակում նշում են, որ «ՆԱՏՕ նշանակալի դաշնակցին ու առեւտրային գործընկերոջն օտարելը բացասական հետեւեւանքներ կունենա ԱՄՆ աշխարհաքաղաքական շահերի եւ արտահանումն ու աշխատատեղերի ստեղծումը խթանելու ջանքերի վրա»: Ըստ կորպորացիաների ղեկավարների, ամերիկյան ռազմական ու ավիացիոն արտադրանքի արտահանումները Թուրքիա 2009թ. կազմել են ավելի քան \$7 մլրդ, եւ նույն մակարդակն է ակնկալվում 2010թ., ինչի արդյունքում աշխատանքով ապահովվում են տասնյակ հազարավոր ամերիկացիներ: Aerospace Industries կորպորացիան, որում 270-ից ավելի ընկերություններ են ընդգրկված, առանձին նամակ է հղել՝ նույնպես հայտնելով իր մտահոգությունը:

Թուրքական լոբբինգում զգալի ավանդ ունի նաեւ «Կոնգրեսի նախկին անդամների ամերիկյան ասոցիացիա» կազմակերպության շրջանակներում 2005թ. հիմնադրված Թուրքիայի հարցերով կոնգրեսական հետազոտական խումբը (Congressional Study Group On Turkey), որն իրականացնում է ԱՄՆ-ի եւ Թուրքիայի խորհրդարանականների համագործակցության ծրագիր՝ կանոնավոր կլոր սեղաններ եւ քննարկումներ, ԱՄՆ կամ այլ երկրներում տարեկան սեմինարներ: Խումբը ներկայում ակտիվ մասնակցություն ունի Ներկայացուցիչների պալատում, որի աշխատանքներին ներգրավված են հետազոտական խմբի նախագահներ, նախկին կոնգրեսական Ռոբերտ Վեքսլերն ու Էդ Ուայթֆիլդը (վերջինս Թուրքիայի եւ ԱՄՆ թուրքական համայնքի հարցերով Կոնգրեսի հանձնախմբի համանախագահն է եւ ակտիվ դերակատարում ունի երկու լոբբիստական կազմակերպությունների համագործակցության ապահովման գործում): Հետազոտական խումբը գործունեություն է ծավալում Թուրքիայի եւ ԱՄՆ կառավարությունների, երկու երկրների գործարար, ուղեղային կենտրոնների, գիտական շրջանակների հետ անձնական եւ ինստիտուցիոնալ կապերի հաստատման ու ամրապնդման ուղղությամբ:

**ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ
ԵՎ ՓՈԽՅԱՏՈՒՑՄԱՆ ԽՆԴԻՐԸ
Սուրեն Մանուկյան**

2010թ. մարտի 31-ին Սերբիայի խորհրդարանը ներողություն խնդրեց Սրբերենիցայում բոսնիացիների կոտորածի համար, որը 2007թ. ՄԱԿ Միջազգային դատարանը ցեղասպանություն էր ճանաչել: Ավելի վաղ, 2010թ. փետրվարի 25-ին Ռուանդա կատարած պաշտոնական այցի ժամանակ Ֆրանսիայի նախագահ Նիկոլա Սարկոզին միջազգային հանրության անունից ներողություն հայցեց 1994թ. ռուանդական ցեղասպանությունը չկանխելու համար:

Սակայն այս երկու դեպքում էլ մեղքի ընդունման եւ ներողության հայցման կողքին բացակայում էր պատասխանատվության եւ փոխհատուցման կարեւորության ընդգծումը: Այնինչ ցեղասպանության ճանաչումը եւ ընդունումը միայն առաջին քայլն են մարդկության դեմ իրականացված ծանրագույն հանցագործության վնասները վերացնելու ճանապարհին:

Ցեղասպանության մասին 1948թ. ՄԱԿ կոնվենցիան հստակ չի մանրամասնում այն պատասխանատվությունը, որն առաջանում է ցեղասպանության իրականացման դեպքում՝ ընդամենը սահմանափակվելով այն դրույթով, թե ցեղասպանություն իրականացնող պետությունը պատասխանատվություն է կրում դրա համար: Սակայն մի շարք իրավական փաստաթղթեր եւ այլ ցեղասպանությունների, հատկապես հրեական հոլոքոստի փորձը թույլ են տալիս որոշակիացնել այս խնդիրը:

Բարոյական պատասխանատվություն

1969թ. Գերմանիայի կանցլեր Վիլի Բրանդը Բեռլինյան սինագոգի առջեւ ծնկաչոք գերմանական ժողովրդի անունից ներողություն խնդրեց հրեաներից՝ կատարված ոճրի համար:

Յրեաների դեմ իրականացված ցեղասպանությունն ընդունվեց եւ խորապես գիտակցվեց գերմանական ազգի կողմից, ու որպես հետեւանք՝ գերմանական հասարակության մի քանի սերունդ իր վրա է կրում այդ սարսափելի մեղքի զգացումը եւ հանցագործության կատարման բարդությունը:

Գերմանիան ոչ միայն հավաքական պատասխանատվություն է վերցրել նացիստների գործած հանցանքների համար, այլև շարունակական աշխատանք է տանում նույնաման ողբերգության կրկնությունն ապագայում կանխելու համար: Հոլոքոստը պարտադիր առարկա է գերմանական դպրոցներում, մասնագիտական ու բարձրագույն ուսումնական հաստատություններում: Երկրում գործում են հոլոքոստի թանգարաններ, եւ գրեթե յուրաքանչյուր քաղաքի թանգարանում կա հրեաների ողջակիզմանը նվիրված ցուցադրություն: Նացիզմի ցանկացած դրսեւորում պատժվում է օրենքով: Օրինակ, մինչեւ երեք տարի ազատազրկմամբ պատժվում է նացիստական ողջույնը:

Ամեն տարի հունվարի 27-ին Բուենոսայթսում հոլոքոստի հիշատակին հատուկ նիստ է գումարում, որը հեռարձակվում է հանրային հեռուստատեսության առաջին ալիքով եւ որին ելույթով հանդես է գալիս պատվավոր հյուրը՝ հոլոքոստը վերապրած հայտնի պատմաբան կամ քաղաքական/հասարակական գործիչ:

Բարոյական պատասխանատվության առկայությունը չափազանց կարեւոր է, քանի որ նրանից է սկսվում պատասխանատվության այլ ձեւերի գործադրումը: Սակայն Հայոց ցեղասպանության դեպքում բարոյական պատասխանատվությունը բացակայում է: Թուրքական պետությունը հրաժարվում է ընդունել կատարած ոճիրը եւ ավելին՝ Հայոց ցեղասպանության մասին ցանկացած քննարկում կարող է քրեական պատասխանատվության պատճառ դառնալ:

Քրեական պատասխանատվություն

Միջազգային հանցագործության համար անհատներին քրեական պատասխանատվության ենթարկելու սկզբունքն առաջին անգամ կիրառվեց Նյուրնբերգյան դատավարության ընթացքում:

Այն դատապարտեց մի շարք գերմանական պաշտոնատար անձանց մարդկության դեմ գործած հանցանքի համար, չնայած դեռ գոյություն չունեին միջազգային դատարան, որն իրավասություն ունենար քննելու միջազգային հանցագործություններ եւ ցեղասպանական գործողություններ իրականացրած առանձին անձանց գործեր:

Հետագայում ՄԱԿ-ը հիմնեց դատարաններ, որոնք սկսեցին քննել ցեղասպանության համար պատասխանատուների գործեր: Այսպես, 1993թ. հիմնադրվեց նախկին Հարավսլավիայի գործերով միջազգային քրեական տրիբունալը, որը դատապարտեց մոտ 50 նախկին պետական գործիչ եւ զինվորականի, 1994թ. կազմված Ռուանդայի գործերով միջազգային քրեական տրիբունալը դատավճիռ կայացրեց մոտ 25 մարդու, այդ

թվում երկրի վարչապետ ժան Կամբանդեի վերաբերյալ: Բացի այդ, այսօր գործում են Սիերա Լեոնեի գործով Հատուկ դատարանը (2000 թվականից) եւ Կամբոջայի դատարանների Արտակարգ պալատները (2006 թվականից): Իսկ Հաագայի միջազգային քրեական դատարանը մի քանի սուդանցի բարձրաստիճան պաշտոնյայի, այդ թվում նաեւ երկրի նախագահ Օմար ալ-Բաշիրի ձերբակալման համար արտոնագիր է տրամադրել՝ մեղադրելով նրանց ԴարՖուրում իրականացված ցեղասպանության մեջ:

Նյուրնբերգյան դատավարության ժամանակ բրիտանական գլխավոր դատախազ Շոուկրոսը նշում էր, որ հայերի ցեղասպանությունը մարդկության դեմ հանցագործությունների նյուրնբերգյան իրավական նորմերի ձեւավորման հիմքերից է:

Եվ իրոք. դեռ 1915թ. մայիսի 24-ին, երբ Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան ու Ռուսաստանը Հատուկ հայտարարության մեջ տվեցին Հայոց ցեղասպանության առաջին քաղաքական եւ իրավական գնահատականը՝ Օսմանյան պետության գործողությունները որակելով «մարդկության եւ քաղաքակրթության դեմ հանցագործություն», նշվում էր նաեւ թուրքական կառավարության անդամների անխուսափելի քրեական պատասխանատվության մասին: Հետագայում այս հիմքի վրա կառուցվեց Փարիզի խաղաղության կոնֆերանսում Օսմանյան կայսրության պատասխանատվության հիմնադրույթը: Այս առումով հետաքրքիր է Կ.Պոլսում Մեծ Բրիտանիայի Գլխավոր կոմիսարի տեղակալ Ուեբի հեռագիրը, որն ուղարկվել էր 1919թ. ապրիլի 3-ին Փարիզի խաղաղության համաժողովին. «Հայերի նկատմամբ դաժանությունների մեջ մեղավոր բոլոր անձանց պատժելը կնշանակեր անխտիր բոլոր թուրքերին մահապատժի ենթարկել եւ, հետեւաբար, ես առաջարկում եմ, որ պատիժն ավելի շուտ իրականացվի պետական մակարդակում՝ նախկին թուրքական կայսրության մասնատման տեսքով եւ անհատական մակարդակում՝ բարձրագույն պաշտոնական անձանց դատի տալու միջոցով... նրանց պատիժը օրինակ է ծառայելու»:

Սակայն Մեծ եղեռնի կազմակերպիչները հիմնականում խուսափեցին պատասխանատվությունից: Օսմանյան կայսրության կառավարությունը, ձգտելով պետությունը զերծ պահել քաղաքական պատասխանատվությունից, հատուկ զինվորական դատարանում մահապատժի դատապարտեց երիտթուրքական կառավարության ղեկավարությանը, ինչը հետագայում ի կատար ածեցին հայ վրիժառուները:

Իսկ Հայոց ցեղասպանության կազմակերպիչների նկատմամբ հատուկ դատարան հիմնելու վերաբերյալ Փարիզյան խաղաղության համաժողովի որոշումը խափանվեց քաղաքական զարգացումների պատճառով,

եւ Մալթայում բանտարկված հանցագործները, որոնք սպասում էին իրենց դատին, փոխանակվեցին բրիտանական ռազմագերիների հետ: Նրանց մի մասը դարձավ ժամանակակից Թուրքիայի հիմնադիր Մուսթաֆա Քեմալի համախոհն ու զինակիցը:

Նյութական պատասխանատվություն

Միջազգային իրավունքը ցեղասպանության իրականացման համար նախատեսում է նաեւ նյութական փոխհատուցում: Այն իրացվում է ունեցվածքի վերադարձի եւ սեփականության այլ իրավունքների վերակարգման (ռեստիտուցիայի), ինչպես նաեւ անձին ու ազգային խմբին հասցված վնասի եւ կորուստների (տոկոսների հետ միասին) վերականգնման տեսքով, ինչպես նաեւ՝ բարոյական վնասի նյութական փոխհատուցմամբ: Հանցագործության բոլոր մասնակիցները՝ մասնավոր անձինք, պետականաստեղծ ազգը եւ հենց պետությունը ենթակա են տնտեսական պատժամիջոցների: Պատժվելու են նաեւ այն պետությունները, բանկերը եւ մասնավոր անձինք, որոնց բարեկեցությունը կառուցված է ցեղասպանության զոհ դարձած ազգի կողոպուտի վրա:

Նյութական փոխհատուցման հասնելու պարագայում դասական օրինակ կարող են լինել Իսրայելի եւ հրեական կազմակերպությունների գործողությունները:

1951թ. Իսրայելի կառավարությունը դիմում է Գերմանիան օկուպացրած չորս տերություններին՝ պահանջելով տրամադրել մեկ ու կես միլիարդ դոլար՝ իբրեւ փոխհատուցում իր տարածքում Եվրոպայից տարագրված կես միլիոն հրեաներին ընդունելու համար: Սրան զուգարվում էր սեփականության կորստի դիմաց վեց միլիարդ դոլարի փոխհատուցման պահանջը:

1951թ. սեպտեմբերին Գերմանիան պատրաստակամություն հայտնեց քննարկել փոխհատուցում տրամադրելու հնարավորությունը: 1952թ. սեպտեմբերի 10-ին Գերմանիայի կառավարության, Իսրայելի կառավարության եւ Գերմանիայի նկատմամբ հրեաների նյութական պահանջների համաժողովի (The Conference on Jewish Material Claims against Germany) միջեւ ստորագրվեց Ռեպարացիաների մասին համաձայնագիրը, որով Գերմանիան վճարելու էր 3 մլրդ մարկ Իսրայելին եւ 500 մլն մարկ Համագումարին: Այն իրականացվում էր Իսրայելում կապիտալ ներդրումներ իրականացնելու տեսքով, ինչը շատ կարելու էր խաղաց իսրայելական տնտեսության զարգացման մեջ:

1953թ. հոկտեմբերի 18-ին ընդունվում է Փոխհատուցման մասին դաշնային օրենքը, որով Գերմանիան միանվագ եւ ամենամսյա դրամա-

կան վճարումներ է սկսում կատարել հրեաների բավականին լայն շրջանակի: Փոխհատուցման հիմք են համարվում, մասնավորապես, հարազատների եւ բարեկամների կորուստը, առողջությանը հասցված վնասը, սեփականության եւ կապիտալի կորուստը, ազատագրվումը, պրոֆեսիոնալ գործունեության հարկադրական ընդհատումը, ապահովագրական վճարումների դադարեցումը: Այս օրենքը վերաբերում էր ավելի քան 270 հազար մարդու:

Չետագա տարիներին ավելացան նյութական փոխհատուցման մի շարք այլ ծրագրեր. 1980թ. Արեւելյան Եվրոպայից ներգաղթած ավելի քան 180 հազար հրեաների համար՝ 1990թ. հրեական սեփականության վաճառքից ստացած գումարների վերադարձը, 1998թ. նախկին ԽՍՀՄ եւ Կենտրոնական ու Արեւելյան Եվրոպայի քաղաքացիների համար՝ փոխհատուցումը:

Բացի պետական վճարումներից, մի շարք գերմանական տնտեսական հսկաներ 52,5 մլն մարկ փոխանցեցին Գերմանիայի նկատմամբ հրեաների նյութական պահանջների համագումարին եւ գերմանական պետության հետ միասին մոտ 10 միլիարդ մարկ վճարեցին Բռնի աշխատանքի զոհերի հրեական հիմնադրամին:

Մի շարք պետություններ՝ Յունգարիան, Նորվեգիան, Բելգիան, Լիտվան եւ Լեհաստանը նույնպես տարբեր ձևերով փոխհատուցումներ իրականացրեցին:

Չրեական կազմակերպությունները նաեւ ստիպեցին շվեյցարական բանկերին խախտել բանկային գաղտնիքը եւ վերադարձնել այնտեղ պահվող եւ երկար տարիներ չպահանջված հրեական գումարները:

Չայոց ցեղասպանության պարագայում նյութական փոխհատուցման խնդիրը նույնպես լուծված չէ: Չայերի սեփականությունը եւ ունեցվածքը նպատակառոտորեն կերպով թալանվեց թուրքական պետության կողմից, իսկ 1915թ. ընդունված «Լքյալ գույքի մասին» երկու օրենքները օրինականացրեցին այդ թալանը: Թուրքական ժամանակակից խոշորագույն շատ ընկերություններ իրենց նախնական կապիտալը կուտակեցին հենց հայկական հարստության բռնազավթման միջոցով: Բանկերում գտնվող հայերի գումարները կառավարության հրամանով փոխանցվեցին պետական գանձարան, իսկ հետագայում ուղարկվեցին Բեռլինի Reichsbank:

1919թ. հայկական ազգային պատվիրակության նախաձեռնությամբ ստեղծվել էր հատուկ հանձնաժողով, որը պետք է գնահատեր ցեղասպանության ընթացքում հայերին հասցված նյութական վնասը: Չանձնաժողովը եկավ այն եզրակացության, որ հայերից բռնագրավված հարստության գումարային արժեքը կազմում է 3 միլիարդ 750 միլիոն

դուլար: Այս թիվն ընդունվեց նաև ամերիկյան Կոնգրեսի հանձնաժողովի կողմից: 1920թ. օգոստոսի 10-ին ստորագրված Սելրի պայմանագրով չեղյալ էին հայտարարվում նաև «Լքյալ գույքի մասին» օրենքները, իսկ սեփականության իրավունքը պետք է վերականգնվեր: Սակայն Սելրի պայմանագրի գործարկման խափանումը չլուծված թողեց նաև այս հարցը:

Քաղաքական պատասխանատվություն

Փերմանիայի կողմից իրականացված ցեղասպանությունը դարձավ նաև քաղաքական պատասխանատվության պատճառ: Չրեա ժողովուրդը քաղաքական փոխհատուցում ստացավ իր ողբերգության համար. զոհերի նմանօրինակ ծավալներից սարսափած միջազգային հանրությունը տվեց հրեաներին այն, ինչի համար վերջիններս երկար պայքարում էին՝ սեփական պետություն ստեղծելու իրավունքը:

Չայոց ցեղասպանության համար քաղաքական պատասխանատվությունն իրականություն չդարձավ: Թեև Փարիզի խաղաղության համաժողովում քննարկումների ժամանակ թուրքական կառավարության գործողությունները բազմիցս որակվեցին իբրև «մի ամբողջ ազգի ոչնչացում» եւ «մարդկության դեմ հանցագործություն», իսկ Սելրի պայմանագրով, որպես քաղաքական պատասխանատվություն՝ թուրքական պետությունը զրկվում էր Չայաստանի, Քուրդիստանի, Սիրիայի, Լիբանանի, Արաբիայի եւ Իրաքի նկատմամբ տարածքային իրավունքներից, սակայն իրավիճակի փոփոխությունը գերեզմանեց հայերի սպասելիքները:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Ռուբեն Մելքոնյան ՊՈԼՍԱՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԸ ՆՈՐ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԻ ԱՌԱՋ	1
Վահրամ Հովյան ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՅ ԲՈՂՈՔԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԸ	6
Արեստակես Սիմավորյան ՆԵՈՍՄԱՆԻՉՄԸ ԹՈՒՐՔԻԱՅԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ	11
Գագիկ Տեր-Հարությունյան ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐ ԵՎ ՀՆԱՐԱՎՈՐ ՍՑԵՆԱՐՆԵՐ	16
Բենիամին Պողոսյան ԹՈՒՐՔԻԱ – ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ	22
Արաքս Փաշայան ԵՎՐՈՊԱՅԻ ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԸ. ՀԱՐՑԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄ	29
Կարեն Վերանյան ԹՈՒՐՔԱԿԱՆ ԼՈՔՔԻՆԳԸ ԱՄՆ-ՈՒՄ. ՀԱԿԱՀԱՅԿԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԻՔՐԵՎ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ	35
Սուրեն Մանուկյան ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ԽՆԴԻՐԸ	39

*Շապիկին պատկերված է
անանուն եկեղեցի՝ ԱՃԻԻԳ հյուսիս*

«ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ», Հայաստանի
Հանրապետական կուսակցության հրատարակություն
Խմբագրական խորհուրդ
Երեւան, 375010, Մելիք-Ադամյան 2: Հեռ. 58 04 91, 58 04 83:
Էլ. փոստ՝ hanrapetakan@hhk.am:
Հիմնադիր՝ Հայաստանի Հանրապետական կուսակցություն:

Թուղթը՝ օֆսեթ, ֆորմատը՝ 70×108 1/16:
Պայմանական 3,5 մամուլ: Տպաքանակը՝ 1000:
Տառատեսակը՝ «Arial Armenian» եւ «Vs Helvetica»:
Վկայական՝ ՕՄՍ 000176:
Տպագրվել է «Ամարաս» տպարանում: